



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines


Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.


We also ask that you:


- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>







ՈՒՍՈՒՄՆ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ
ՀԱՒԱՏՈՅ

ԸՍՏ ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՀԱՅ. ԱՌԱԿԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ի ՊԷՏՍ ԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱԿԹԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ

ՅՕՐԻՆԵԱՅ
ՍԱՀԱԿ Ա. ԻԱՆՃԵԱՆ

ՎԱԻԵՐԱՅՄԱՄԲ
ԱԶԳ. ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ


ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

معارف عمومیہ نظارت جلیہ سنک فی ۸ مارت سنہ ۳۲۱ تاریخلی
و ۱ نومروی رخصتنامه سیلہ طبع اولتشدیر

Կ. ՊՈԼԻՍ
Տպգր. վ. Ե. Հ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԻԱՆ

1905

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES



Khanchean, Sahak

Usumu Kristoncalem

ՌԻՍՈՒՄՆ *Illustration*

ՔՐԻՍՏՈՆԵՒԱԿԱՆ

ՀԱՒԱՏՈՅ

ԸՍՏ ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՀԱՅ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ի ՊԵՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱԿԻՐԹԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ

ՅՕՐԻՆԵԱՅ

ՍԱՀԱԿ Ա. ԻԱՆՃԵԱՆ

ՎԱԻԵՐԱՅՄԱՄԲ

ԱԶԳ. ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

معارف عمومیہ نظارت جلیہ سنک فی ۸ مارٹ سنہ ۳۲۱ تاریخلی
و ۱ نومرولی رخصتنامہ سیلہ طبع اولمشدر

Կ. ՊՈԼԻՍ

Տպգր. վ. եւ չ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

1905

ՎԱՐՋԱՐԱՆ
ՎԱՐՋԱՐԱՆ
1642

Երև
ԲՐԲՆ
ՏՅԳ
ԵՍԻՔ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ

ԽՐԻՄԵԱՆ

ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ի ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՑ

Տ. ՄԱՂԱԿԻԱ Ս. ԱՐԿԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՕՐՄԱՆԵԱՆ

GRAD

EREN

869

11 01 93

ՈՐՈՇՄՆԱԳԻՐ

ՊԱՏԿ. ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ



Կրօնական ժողովն ըստ սեղեկագրելոյ Արժ. Տէր Սահակ Աւագ Քահանայի Տ. Սարգսեան՝ որոշէ թոյլ տալ սպագրութեան ՌԻՍՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՅ դասագրոց Պ. Սահակայ իմաննեան :

Ի դիմաց Կրօնական ժողովոյ

Ասենաղախի

Ասենապետ

ՅԱԿՈԲ Ե. Վ. ԱՇՈՏ
ՓԱՓԱԶԵԱՆ

ԽՈՐԷՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
ՆԱՐ ՊԷՅ

19 Մայիս 1886

Ի Պատրիարքարանի Հայոց

Կ. Պոլիս



Հ Բ Ա Մ Ա Ն Ա Գ Ի Բ

Ս Ր Բ Ա Չ Ա Ն Պ Ա Տ Ի Ի Ա Ր Բ Հ Օ Ր



Ըստ որոշման Կրօնական Ժողովոյ Ազգային
Կեդրոնական Վարչութեան՝ հրամայելով՝ սպագրու-
թեան սոյն դասագրոյ յուսուձն ուխտի մանկանց
Ս. Եկեղեցոյս Հայոց :

Պ. Կ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՊՍ.

19 Մայիս 1886

Ի Պատրիարքարանի Հայոց

Ս. ՊԱԻՍ



Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն



Կրօնն՝ է մի գորաւոր եւ անփակեղի կապ, որ կը միացնէ զմարդ իւր Արարչին Աստուծոյ հետ :

Միանալ եւ կապուիլ Աստուծոյ հետ եւ երջանիկ լինել՝ ուրիշ բանով երբեք չէ կարելի, երբ ոչ ճանչնալով, սիրելով եւ պաշտելով զԱստուած :

Ուրեմն կրօնի ուսումն՝ որ հիմն է բարոյական դաստիարակութեան, ամենէն գլխաւոր եւ կարեւոր գիտութիւնն է ամեն դասակարգի մարդոց համար միանգամայն. զի անով կ'ուսանի մարդ նոյն այդ ճանչնալու, սիրելու եւ պաշտելու հանգամանքներն, հետեւաբար հարկ անհրաժեշտ է որ մեր մասալ սերնդեան ջամբենք այդ գիտութիւնն իբրեւ կարն հոգեպարար իւր մանկական հասակէն սկսելով :

Եւ որովհետեւ մարդ ամեն հասակի մեջ ունի ամեն բանէ յառաջ առ Աստուած վերաբերեալ իւր սրբազան պարտաւորութիւններ, քանի որ չիք հնար ամենեւին որ ապրի մարդ անկարօտ հոգւոյ հանգստեան, արտի անդորութեան, Նախախնամական օգնութեան, շնորհաց, յուսնոյ եւ մխիթարութեան, ուրեմն կրօնի ուսումը եւ դաստիարակութեամբ պէտք է որ գիտնայ եւ ճանչնայ մարդ այդ պարտաւորութեանց կատարման հարկն ու եղանակը. վասն զի մարդուս վարած կեանքին գլխաւոր եւ առաջին պայմանն է պարտքը կատարել, իրաւունքն ալ պահանջել. զի իճնչպէս կրնամք համարձակիլ եւ պահանջել

Ասուծմէ մեր կենաց անհրաժեշտ պէտքեր, երբ թերանանք եւ զլանանք մեր ծառայութեան պարտուց կատարման մէջ :

Ուրեմն կրօնի եւ բարոյականի ուսումն պէտք է պատրաստուի՛լ ըլլալ մեր ամեն կարգի բաղային եւ մասնաւոր նախակրթարանաց մէջ, որպէս զի ունենայ ազգն ապագայ բարեկիրք եւ բարեպաշտ հայրեր ու մայրեր, պատրաստանայ, բարի եւ ազնիւ փառաբացիներ :

Սոյն զգացմամբ եւ մանաւանդ մեր ուսանող մանկւստյն բարոյապէս դաստիարակուելուն իմովսանն փոքր ի շատ օժանդակած լինելու բաղձանքով ահա հրատարակած լինելով այս Քրիստ. հաւատոյ ուսման դասագիրքն, ուրախ եմ որ յաջողուած է ինձ նորա ճինգերորդ տպագրութեանն ալ ձեռնարկել այս անգամ հարկ եղած կարեւոր սրբագրութեանց կատարմամբ եւ նորագոյն ձեւի մը վերածմամբ. զոր աւարտելով կը յանձնեմ ահա ի կիրառութիւն ուսանող Հայ մանկւստյն, որոց օգտուիլն անեղձ փառաց եւ վարձուց պսակ մ'է ինձ յաւե՛ս :

ՍՍ.ՀՍ.Կ Ա. ԽԱՆՃԵՍԱՆ



ՈՒՍՈՒՄԸ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՅ

ՄԱՍԸ ԱՌԱՋԻՆ

Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Ք

1. Դուն ի՞նչ եմ .

Ես ճշմարիտ Հայ քրիստոնեայ եմ :

2. Հայ քրիստոնեայ ըսելուդ պատճառն ի՞նչ է :

Հայ քրիստոնեայ ըսելուս պատճառն այն է որ , ազգաւ Հայ և կրօնքով քրիստոնեայ եմ :

3. Քրիստոնեայ ի՞նչ ըսել է .

Քրիստոնեայ կ'ըսուի այն անձը , որ Քրիստոսի Հետեւող և Հաւատացող է ճշմարտութեամբ :

4. Քրիստոսի ի՞նչպէս հաւատալ պէտք է .

Քրիստոսի պէտք է հաւատալ ճշմարիտ և կատարեալ հաւատքով , յուսով և սիրով :

5. Քրիստոնէին արտաքին նշանն ի՞նչ է .

Քրիստոնէին արտաքին նշանն է Քրիստոսի Սուրբ Խաչը , զոր կը կնքէ

միշտ իւր անձին վրայ ըսելով. Յանուն
Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ Ամէն ։
6. Ինչպէս կը խաչակնքենք .

Այսպէս պէտք է խաչակնքենք .
մեր աջ ձեռքին երեք մատները իրար
միացնելով կը տանինք մեր ճակտին
և կ'ըսենք « Յանուն Հօր » . յետոյ մեր սր-
տին վրայ տանելով կ'ըսենք « եւ Որդոյ » .
յետոյ մեր ձախ թեւին և անկէ ալ
աջ թեւին կողմը տանելով կ'ըսենք
« եւ Հոգւոյն Սրբոյ » . Ամէն ։

7. Խաչակնքելով ինչ յայտնած կ'ըլլանք .

Խաչակնքելով կը յայտնեմք թէ կը
հաւատամք ամենասուրբ Երրորդու-
թեան և միոյ Աստուածութեան ։

Դ Ա Ս Ա .

Ա Ս Տ Ո Ւ Ա Մ

1. Աստուած ո՞վ է .

Աստուած՝ երկնի և երկրի և ա-
մէն բաներու միակ ստեղծողն ու կա-
ռավարողն է ։

2. Աստուած ինչ է .

Աստուած Հոգի է, որ ո՛չ սկիզբն
ունի և ո՛չ վերջ ։

3. Հոգի ըսելով ի՞նչ կ'իմանանք.

Հոգի ըսելով կ'իմանանք որ Աստուած աննիւթ և անմարմին էութիւն մ'է, զոր մեր զգայութեամբ չենք կրնար ըմբռնել :

4. Աստուծոյ էութեանը կրնա՞նք խելք հասցնել.

Աստուծոյ էութեանը չենք կրնար խելք հասցնել, վասն զի ո՛չ ոք կրցած է զանի տեսնել, և ո՛չ ոք կրնայ զանի հասկնալ իր տկար մտքով :

5. Ինչէ՞ն գիտենք որ Աստուած կայ.

Միայն՝ երբ երկինքն ու երկիրը գիտենք ու մեր վրայ նայինք, կ'ըսենք որ այս ամէն հրաշալի բաներ ունին տէր եւ ստեղծող մը, որ է Աստուած :

6. Աստուած ո՞ւր է.

Աստուած իւր ամբաւ և անհուն զօրութեամբ ամէն տեղ է :

7. Հապա ինչո՞ւ համար երկինքն է կ'ըսենք.


Աստուած երկինքն է կ'ըսենք, աւնոր գերագոյն բարձրութիւնն ու մեծ վայելչութիւնը ցոյց տալու համար :

Գ Ա Ս Բ.

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

1. Աստուծոյ Էութեանը վրայ ուրիշ Բ՞նչ տեղեկութիւն ունինք.

Ս. Գիրքը մեզ կը սորվեցնէ որ մի Աստուածութեան մէջ երեք անձնաւորութիւն կայ. Հայր, Որդի և Հոգի սուրբ ։



2. Այդ երեք անձինք իրարմէ կը զանազանին.

Մենք այսչափ գիտենք և կը հաւատանք որ երեք անձինք՝ ո՛չ թէ բնութեամբ, այլ անձնաւորութեամբ կը զանազանին իրարմէ ։

3. Ի՞նչպէս.

Այսպէս՝ Հօր անձը ուրիշ է. Որդւոյ անձը ուրիշ է, Հոգւոյն սրբոյ անձը ուրիշ է ։

4. Ինչո՞ւ բնութեամբ չեն զանաղանիր .

Վասն զի երեք անձինք միանդամայն համազօր , համակամ և համափառ են բնութեամբ ։

5. Երեք անձինք ի՞նչ որոշ յատկութիւններ ունին .

Հայր Աստուած ծնող է անեղանելի . Որդին Աստուած անսկզբնական ծնունդ է Հօր . իսկ Հոգին սուրբ Աստուած է բզխումն Հօր և առողջ յՈրդւոյ ։

6. Աստուծոյ երեք անձնեայ մի Աստուածութիւն ըլլալուն օրինակաւ մը խելքերնիս կրնա՞յ հասնիլ .

Այս անձառ խորհրդոյն համար իսկական նմանութիւն և օրինակ չենք կրնար յառաջ բերել , բայց խելքերնիս փոքր ի շատէ պառկելու համար կրնանք մեր անձը օրինակ տալ ։

7. Ի՞նչպէս .

Վասն զի մեր անձն ալ մէկ բնութեան մէջ երեք զօրութիւններ կը բովանդակէ , որք են հոգեկան կարողութիւն կամ զգայութիւն , միտք և կամք ։

8. Ասկէ ի՞նչ պիտի հասկնամք .

Ասկէ սա կը հասկնանք որ սոյս ե-

րեք զօրութիւնք թէեւ իրարմէ տարբեր են, բայց երեքն ալ անբաժանելի են մեր անձին մէջ, այնպէս որ մէկն ալ չենք կրնար զատել հեռացնել մեզմէ ։

Պ Ա Ս Պ .

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ

1. Ո՞վ ստեղծեց այս աշխարհը .

Այս աշխարհն ստեղծեց Աստուած ամենաբարին վեց օրուան մէջ ։

2. Ի՞նչ բանէ ստեղծեց .

Աստուած “Եզիցի” ըսելով ոչինչէն գոյացուց երկինքն ու երկիրը, արեւը, լուսինը, աստղերը, ջուրը, հողը, կրակը, օդը, մետաղները, տունկերը, կենդանիները և այլ ամէն բան ։

3. Ոչինչէ գոյացնել ըսելով ի՞նչ կ'իմանանք .

Ոչինչէ գոյացնել ըսելով սա կ'իմանանք որ այս ամէն բաներուն մէկն ալ առաջ չկար, ետքը երբ Աստուած ուզեց, ստեղծեց ։

4. Ուրեմն առաջ ի՞նչ կար .

Առաջ միմիայն Աստուած կար . այսինքն հայր, Որդի և Հոգի սուրբ ։

5. Աստուած մարդն ի՞նչ բանէ ստեղծեց .

Աստուած մարդն հողէ ստեղծեց, և անոր բանական և անմահ հողի տուաւ ։

6. Մարդն ի՞նչ առաւելութիւն ունի միւս արարածոց վրայ .

Մարդն ուրիշ ամէն արարածներէն աւելի բարձր ու գերազանց է իւր անմահ հողով, իր իմացականութեամբն ու բանականութեամբ ։

7. Աստուած մարդն ի՞նչ վիճակի մէջ ստեղծեց .

Աստուած մարդն արդար, անմեղ և անմահ վիճակի մէջ ստեղծեց, որ զինքը փառաւորէ հրեշտակաց պէս և երջանիկ ըլլայ ։

8. Մնաց նա այդ վիճակին մէջ .

Չմնաց մարդն այդ վիճակին մէջ, փասն զի մեր նախածնողք մեղանչեցին Աստուծոյ դէմ ։

Գ Ա Ս Գ .

Հ Ր Ե Շ Տ Ա Կ Ք

1. Հրեշտակներն ի՞նչ են .

Հրեշտակներն հողեղէն արարածներ են ։

2. Հողեղէն ըսելով ի՞նչ պիտի հասկնանք .

Հողեղէն ըսելով կը հասկնանք որ անոնք ընկ հողի են, մարմին չունին ։

3. Ինչո՞ւ համար ստեղծուած են անոնք .

Հրեշտակներն անոր համար ստեղծուած են որ սպասաւորեն Ամենասուրբ Երրորդութեան, և միշտ փառաւորեն ղևա :

4. Ո՞ւր են հրեշտակները .

Հրեշտակները երկինքն են Աստուծոյ քով :

5. Հրեշտակաց ամենքն ալ երջանիկ են .

Հրեշտակներէն մաս մը ապստամբելով Աստուծմէ, դժոխոց յաւիտեանական տանջանաց մատնուեցան :

6. Ի՞նչ էր անոնց ապստամբութիւնը .

Ասոնք ուղեցին Աստուծոյ նման և Աստուծոյ հաւասար ըլլալ :

7. Այդ ապստամբեալ հրեշտակները ի՞նչ կը կոչուին .

Ասոնք դեւ կամ սոտանայ կը կոչուին :

8. Երջանիկ հրեշտակք ի՞նչ վերաբերութիւն ունին մարդոց .

Երջանիկ հրեշտակներն Աստուծոյ հրամանաւ մարդոց պահապան և պաշտպան են :

9. Հրեշտակաց զլխաւորները որո՞նք են .

Հրեշտակաց զլխաւորներն են Գաբրիէլ և Միքայէլ հրեշտակապետները :

ԳԱՍ Ե.

ՆԱԽԱԾՆՈՂՔ ՄԵՐ ԱԴԱՄ ԵՒ ԵՒԱ

1. Ո՞չք են մեր նախաձնողք.

Մեր նախաձնողք են Ադամ և Եւա, որոնցմէ սերեցան բոլոր մարդիկ :

2. Նախաձնողք ի՞նչպէս ստեղծուեցան Աստուծա՞ն :

Աստուած Ադամն ստեղծեց հողէն, Եւան ալ Ադամայ մէկ կողէն :

3. Ո՞ւր էր ատոնց բնակավայրը.

Մեր նախաձնողաց բնակավայրն էր դրախտը^(*), որ ամէն տեսակ պտղոյ ծառերով լի դեղեցիկ պարտէզ մ'էր :

4. Ի՞նչպէս մեղանչեցին ատոնք.

Ատոնք Աստուծոյ արգիլած պտուղն ուտելով անոր պատուէրին դէմ անհնազանդ գտնուեցան :

5. Այդ արգիլուած պտուղին ծառը ի՞նչ կը կոչուէր.

Այս ծառը կը կոչուէր ծառ գիտութեան բարւոյ և չարի :

6. Այդ մեղքն ի՞նչպէս գործեցին.

Նախ և առաջ Եւա մեղանչեց սառանայէն թելադրուելով :

(*) Դրախտն էր Ասիոյ այն կողմն, ուր կը բոցիին իորս զլխաւոր գետք :

7. Սատանային թելադրութիւնն ինչ էր .

Սատանան օձի կերպարանքով երեւարով Եւայի ըսաւ որ՝ եթէ այն արգիլուած պտղէն ուտեն, Սատուծոյ պէս պիտի ըլլան :

8. Ինչո՞ւ համար սատանան այդ խաբէութիւնը գործեց .

Սատանան անոր համար գործեց



այս խաբէութիւնը որ իր կորսնցուցած երկնաւոր վայելչութիւնը մարդիկ չվայելեն :

9. Եւա անսաց այս խաբէութեան .

Եւա այս սուտ խօսքին խաբուեցաւ, ինքն այս պտուղն ուտելէն ետքը Ադամայ ալ տուաւ, որ կերաւ զայն :

Գ Ա Ս Զ.

ԱՆԿՈՒՄՆ ՄԱՐԴՈՅ

1. Մեր նախածնողաց անհնազանդութեան մեղաց հետեւանքն ի՞նչ եղաւ .

Մեր նախածնողք այս անհնազանդութեան մեղօք Աստուծոյ երեսէն ինկան և պատժուեցան :

2. Ի՞նչ պատիժ կրեցին .

Աստուած անոնց ըսաւ որ « Հող էիք



և Հող դառնաք » և դրախտէն դուրս վռնտեց զանոնք :

3. Ուրիշ պատիժ ալ կրեցին .

Նաեւ անոնք իրենց անմեղութիւնը որուսին, և ինկան մարմնաւոր և հուեւոր թշուառութեան մէջ :

4. Որո՞նք են մարմնաւոր թշուառութիւնք.

Մարմնաւոր թշուառութիւնք են, տառապանք, հիւանդութիւն և մահ :

5. Որո՞նք են հոգեւոր թշուառութիւնք.

Հոգեւոր թշուառութիւնք են՝ Աստուծոյ արքայութենէն զրկուիլ և դժուխոց գատապարտութեան մատնուիլ :

6. Մեր նախաճնո՞ղք միայն պատժուեցան.

Մեր նախաճնողաց ոյս յանցանքն ու պատիժը իրենց սերնդոց ալ անցաւ, և անոր համար է որ ամէն մարդ անոնց յանցանացը մէջ կը ծնի ի մօրէ :

7. Այդ յանցանքն ի՞նչ մեղք կը կոչուի.

Այս յանցանք՝ Ադամային կամ սկզբնական մեղք կը կոչուի, որ կը ջնջուի միայն Սուրբ Աւազանին մկրտութեամբ :

Գ Ա Ս Է.

ԽՈՍՏՈՒՄՆ ԳԱԼՍԵԱՆ ՄԵՍԻԱՅԻ

1. Ադամ և Եւա և անոնց սերունդը այս պատիժէն փրկուեցան.

Աստուած ողորմելով մարդոց թըշուառութեան վրայ, խոստացաւ որ Փրկիչ մը զրկէ իրենց :

2. Այդ Փրկիչն ինչ պիտի ընէր .

Այս Փրկիչը մարդոց մեղքերը պիտի քաւէր . զիրենք սատանային գերութենէն պիտի ազատէր և արքայութեան ժառանգ պիտի ընէր :

3. Ե՞րբ եկաւ յաշխարհ .

Ադամայ և Եւայի մեղանշեղէն շատ երկար տարիներ ետքը այս խոստացեալ Փրկիչն յաշխարհ եկաւ :

4. Մարդիկ այդ Փրկիչն գալուն կ'սպասէին .

Մարդիկ արդարեւ կ'սպասէին Փրկչին գալուն, վասն զի առանց անոր՝ Աստուծոյ երեսէն ինկած պիտի մնային յաւիտեան :

5. Ս. Գրքին մէջ այդ Փրկիչը ինչ անունով կը յիշուի .

Ս. Գիրք Մեսիա կ'անուանէ զայն որ Եբրայեցւոց լեզուաւ Օծեալ ըսել է :

6. Մեսիա չեկած մարդիկ ինչ վիճակի մէջ էին .

Մարդիկ առ հասարակ դժոխոց բանտին մէջ կ'սպասէին անոր դալըստեան :

7. Ինչո՞ւ համար կը սպասէին .

Որպէս զի Մեսիա զիրենք փրկեով դժոխքի տառապանքէն, արքայութեան փառաց հասցնէ :

Գ Ա Ս Ը.

ՈՐԴԻՔ ԵՒ ՍԵՐՈՒՆԴԻՔ ԱՐԱՄԱՅ

1. Աղամ ու Եւա մեղանչելէ յառաջ զաւակ ունեցան.

Աղամ ու Եւա մեղանչելէ ետքը զաւակ ունեցան, և ասիկայ ապստոյց է որ մարդիկ առ հասարակ սկզբնական մեզաց մէջ կը ծնանին :

2. Աղամայ զաւակները որոնք էին.

Աղամ շատ զաւակներ ունեցաւ, բայց անոնց մէջ յանուանէ յիշուածներն են Կայէն, Աբէլ և Սեթ :

3. Ատոնք ինչպէս վարք ունեցան.

Կայէն չար մարդ ըլլալով Աբէլը սպաննեց ատելութեամբ. բայց Աբէլ և Սեթ արդար և բարեպաշտ էին :

4. Ատոնց սերունդն ինչ ընթացք ունեցան.

Աբէլ սերունդ չունեցաւ, վասն զի սպաննուեցաւ. իսկ Կայէնի զաւակները հօրերնուն պէս չար եղան :

5. Սեթայ ցեղը ինչպէս էր.

Սեթայ ցեղը բարեպաշտ մնաց ել կար առեն. բայց ետքը անոնք սաւրուեցան :

6. Ինչո՞ւ է համար.

Վասն զի չարերուն օրինակին հետեւեցան :

7. Ուրեմն բարի մարդ չմնաց աշխարհի վրայ .

Սեթայ ցեղէն միայն Նոյ նահապետ և իւր ընտանիքը մնացին արդար և աստուածասպաշտ :

Գ Ա Ս Փ .

Զ Ր Շ Ե Ղ Ե Ղ

1. Երբոր բոլոր մարդիկ այսպէս չարացան, Աստուած ի՞նչ ըրաւ .

Աստուած բաց ի Նոյէն և նորա



ընտանիքէն բոլոր մարդկային ազգը հեղեղով պատժեց :

2. Ուրեմն քանի՞ հոգի ազատեցան .

Նոյ, անոր կինը, երեք մանչ զաներն և անոնց կիներն, ընդ ամենն

ու թ հոգի ազատեցան այս պատիժէն
տապանով մը :

Ինչպէս բան էր այդ տապանը .

Այս տապանը նուրի մը կը նմանէր ,
զոր Աստուած ինքն շինել հրամայած
էր Նոյի :

4. Այս ութ հոգիներէն զատ ուրիշ ինչեր կային
Տապանին մէջ .

Աստուծոյ հրամանաւ Նոյ նահա-
պետ անբան կենդանեաց ամեն տե-
սակներէն ալ մէյմէկ կամ աւելի զոյգ
հոն տեղաւորած էր :

5. Զրհեղեղն ինչպէս եղաւ .

Քառասուն օր և քառասուն դիշեր
շարունակ անձրեւ տեղալով Զրհեղեղ
եղաւ , և ջուրերուն մէջ մեռան ջնջուե-
ցան ամէն մարդ , անասուն , ծառ , բոյս
եւայլն :

6. Նոյի երեք որդւոց անուններն ինչ էին .

Նոյի երեք որդիք էին Սեմ , Գամ ,
Յաբեթ :

7. Զրհեղեղէն ետքը մարդիկ ինչպէս ապրեցան :

Զրհեղեղէն ետքը մարդիկ երբոր
գարձեալ հետզհետէ բազմացան
սկսան գէշնալ , և շատեր ՂԱստուա
մոռնալով անոր տեղ զանազան կուռ
քեր պաշտեցին :

Գ Ա Ս Ժ.

ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՇՐԷՒՑ

1. Աշխարհի վրայ բարեպաշտ մարդիկ չմնացին.
Նոյի երեք որդւոցմէ Սեմայ և
Յաբեթայ ցեղերը մասամբ մնացին
բարեպաշտ ։

2. Սեմայ ցեղը բարեպաշտութեան մէջ ինչպէս
նշանաւոր եղաւ .

Աստուած Սեմայ ցեղէն Աբրահամ



նահապետը ընտրեց, որ Փրկիչ մը զրկելու
խոստումը մարդոց մէջ անկորուստ մնայ ։

3. Այդ նահապետն ինչ ըրաւ .

Աբրահամ նախահայր եղաւ զատ
ժողովրդեան մը և առաջնորդ Աստ-
ուածպաշտութեան ։

4. Ո՞րն է այդ զատ ժողովուրդը .

Աստուծոյ ընտրեալ ժողովուրդն
եղան Իսրայելացիք , զոր հայերէն լեզ-
ուաւ հրէայ կը կոչենք :

5. Այդ Իսրայել անունը որով՞ ժառանգեցին
հրէայք .

Հայր Աբրահամու Իսահակ որդւոյն
Յակոբ անուն զաւակը Աստուծոյ կող-
մանէ Իսրայել կոչուեցաւ , ուստի անոր
սերունդն ալ Իսրայելացի ըսուեցաւ :

6. Իսրայել ի՞նչ ըսել է .

Իսրայել՝ աստուածազօր ըսել է :

7. Յաբեթայ ցեղին բարեպաշտութիւնը ինչո՞վ կը
յայտնուի .

Յաբեթայ թողնորդին՝ նահապետն
Հայկ՝ Աստուծոյ հաւատացեալ և բա-
րեպաշտ ըլլալով սպաննեց ջնջեց Բէլ
անուն անաստուածը :

8. Բէլ ո՞վ էր .

Բէլ՝ Քամայ թողնորդին էր :

9. Ինչո՞ւ նախահայրն մեր Հայկ սպաննեց զԲէլ .

Վասն զի Բէլ ամբարտաւանու-
թեամբ կը պահանջէր որ Հայկ՝ միան-
գամայն և ամէն մարդիկ Աստուծոյ տեղ
զինք պաշտեն և հնազանդին իրեն :

Գ Ա Ս Փ Ա .

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ

1. Աստուած ի՞նչ բարիքներ ըրաւ Իսրայելացւոց .
Աստուած շատ բարիքներ , շնորհ-
ներ և հրաշքներ ըրաւ Իսրայելացւոց
իւր մեծ սէրն և ողորմութիւնն անոնց
ցոյց տալու համար :

2. Որո՞նք են գլխաւորներն այդ շնորհաց .
Այս շնորհաց գլխաւորներէն մին
այն է որ Աստուած խոստացաւ Մեսիան
Իսրայելի ցեղէն յաշխարհ զրկելու :

3. Ուրիշ ի՞նչ կայ նշանաւոր .
Նշանաւոր է նաեւ Օրէնքը և Աւետ-
եաց երկրին ժառանգութիւնը՝ զոր Աս-
տուած շնորհեց Իսրայելացւոց :

4. Աստուած ե՞րբ ժառանգեցուց անոնց այդ
երկիրը :

Երբոր Իսրայելացիք յեզիպտոս
դառն գերութեան մէջ կը չարչար-
ուէին Փարաւոններու ձեռքը , Աստ-
ուած ազատեց զիրենք :

5. Ի՞նչպէս ազատեցան այդ գերութենէն :

Աստուած զրկեց անոնց Մովսէս
հարգարէն իբրեւ առաջնորդ , որ զա-

**նոնք Եգիպտոսէն Հանելով Կարմիր
ծովէն անցուց Հրաշքով :**

6. Յետոյ ինչ եղաւ .

**Մովսէսի մեռնելէն յետոյ անոր
յաջորդ Յեսու զօրավարին առաջնոր-
դութեամբ Աստուած տարաւ Հասուց
զանոնք Աւետեաց երկիրը , զոր խոս-
տացած էր :**



7. Ո՞րն է Աւետեաց երկիրը .

**Ս. Գրոց մէջ Աւետեաց կամ Քա-
նանու երկիր և այժմ Պաղեստին կը
կոչուի այն երկիրը՝ ուր է Երուսաղէմ
Հռչակաւոր քաղաքը :**

Գ Ա Ս Ժ Բ .

ՕՐԷՆԱԴՐՈՒՅԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ

1. Աստուած օրէնքը որո՛ւ ձեռքովը տուաւ .

Աստուած օրէնքը Մովսէս Մարգու-
րէին ձեռքով տուաւ Սինա լեռնէն :

2. Այդ օրէնքը քանի՞ տեսակ էր .

Այս օրէնք՝ երեք տեսակ էր, բա-
րոյական, ծիսական և գատաստանական :

3. Այդ երեքն ալ մինչեւ հիմայ կը մնա՞ն .

Քրիստոնէից համար բարոյականը
կը մնայ միշտ . իսկ միւս ծիսական և
գատաստանական օրէնքները խափան-
ուած են :

4. Բարոյական օրէնքն ի՞նչ պատուէրներ կը պա-
րունակէ .

Բարոյական օրէնքը կը պարունակէ
Աստուծոյ տասն պատուիրանքներն, որ
երկու քարեղէն տախտակներու վրայ
դրուած էին :

5. Ի՞նչ կ'ուսանի մարդ այդ տասն պատուէրներով .

Առաջին չորս պատուէրներով կ'ու-
սանի մարդ իւր առ Աստուած ունեցած
պարտաւորութիւնները :

6. Ուրի՞շ .

Վերջին վեց պատուէրներով կ'ու-

սանի մարդ իւր առ ընկերն ունեցած պարտաւորութիւնները :

7. Ըսէ՛ ինձ այդ տան պատուիրանքները .

Ա. Մի եզիցին քեզ այլ աստուածք բաց յինէն :

Բ. Մի արասցես քեզ կուռս :

Գ. Մի առնուցուս զանուն Աստուծոյ քոյ ի վերայ սնտեաց :

Դ. Յիշեա՛ սրբել զօր շաբաթուն :

Ե. Պատուեա՛ զհայր քո և զմայր :

Զ. Մի սպանաներ :

Է. Մի չնար :

Ը. Մի գողանար :

Թ. Մի սուտ վկայեր :

Ժ. Մի ցանկանար տան ընկերի քոյ և մի ամենայնի զինչ ընկերին քո իցէ :

Գ Ա Ս Ժ Գ .

Ա. Բ. ԵՒ Գ. ՊԱՏՈՒԻՐԱՆ

1. Բարոյական օրինաց առաջին պատուերով Աստուած ինչ հրամայած է .

Աստուած կը հրամայէ որ իրմէ զատ ուրիշ Աստուած չճանչնանք ու չպաշտենք :

2. Ինչպէս պաշտել պէտք է զԱստուած .

Պէտք է որ պաշտենք զԱստուած ճշմարիտ հաւատքով, հաստատուն յուսով և անկեղծ սիրով :

3. Երկրորդ պատուէրով Աստուած ինչ կը հրամայէ .

Աստուած կը հրամայէ որ կուռք չշինենք . սյսինքն Աստուծոյ անունը շտանք ոչինչ և ձեռագործ բաներու և չպաշտենք զանոնք :

4. Այդ պատուէրին միթէ չհակառակիր մեր եկեղեցւոյ մէջ պատկերներ ունենալնիս ու յարգելնիս .

Այս պատուէրին հակառակ չեն բնաւ մեր Եկեղեցական պատկերներն . վասն զի անոնք գրուած են եկեղեցւոյ մէջ մի միայն մեր միտքը ձգելու համար մեր Փրկիչը, նորա ամենօրհեալ մայրը, և իրենց առաքինութեամբ Աստուծոյ հաճելի եղող սուրբերը :

5. Ուրեմն ինչ կ'ընենք մենք այդ պատկերները .

Կը յարգենք մենք այս պատկերները, վասն զի օրհնեալ և նուիրական են . բայց մեր ուխտն ու բարեխօսելու ազաւանքը պատկերաց տէրերուն կը վերաբերին :

6. Երբորդ պատուէրով Աստուած ինչ կը հրամայէ .

Աստուած հրամայած է որ ոչինչ բաներու համար Աստուծոյ անունը բերաննիս չառնենք . սյսինքն սուտ և պարապ տեղը երգում չընենք :

Գ Ա Ս Ա .

Դ. Պ Ա Տ Ո Ւ Ի Ր Ա Ն

1. Չորրորդ պատուէրով ինչ կը հրամայէ Աստուած .
Աստուած կը հրամայէ որ իրեն համար նուիրուած օրը սուրբ պահուի :

2. Ո՞րն է այդ նուիրական օրը .

Աստուծոյ նուիրական օրը Շաբաթն է, որ հրէից լեզուաւ հանդստութիւն կը նշանակէ :

3. Մինչև ցարդ ամէն մարդիկ ալ առ հասարակ շաբաթ օրը սուրբ կը պահեն .

Հրէայք՝ Շաբաթը, իսկ քրիստոնեայք՝ կիրակին սուրբ կը պահեն :

4. Այդ փոփոխութիւնը ո՞վ տնօրինեց .

Այս փոփոխութիւնը առաքեալք տնօրինեցին Քրիստոսի համբարձմանէն յետոյ :

5. Ինչո՞ւ համար .

Վասն զի Քրիստոս կիրակի օր յա-

րուժիւն առաւ և կեանք պարգեւեց
աշխարհի :

6. Կիրակի ո՞ր ազգի բառ է .

Կիրակի՝ Յունարէն է, և տէրունա-
կան ըսել է :

7. Կիրակին ի՞նչպէս սուրբ կը պահուի .

Կիրակին սուրբ կը պահուի ամէն
աւուր շահու գործերէ գաղթելով,
և Աստուածպաշտութեան գործերու
զբաղելով :

8. Ո՞րք են աստուածպաշտական գործեր .

Աստուածպաշտական գործեր են՝
եկեղեցի երթալ, ազօթել, Ս. Պատա-
րագ տեսնել, քարոզ լսել, Սուրբ Գիրք
կարդալ, բարի գործեր կատարել, ան-
մեղ մնալ, և այլն :

Գ Ա Ս Ռ .

Ե. Պ Ա Տ ՈՒ Ի Ր Ա Ն

1. Հինգերորդ պատուիրանով Աստուած ի՞նչ կը
հրամայէ .

Կը հրամայէ որ սիրենք ու պատ-
ուենք մեր հայրն ու մայրը, ինչպէս
նաեւ մեր մեծերը որդիական հնազան-
դութեամբ :

2. Ինչո՞ւ համար պատուելու ենք մեր ծնողքը .

Վասն զի Աստուծո՞վ է տքրը մեր ծնողք էղան մեր կենաց պատճառ, և մեզի համար ամէն նեղութիւն քաշած են և կը քաշեն մեր տղայութենէն ի վեր :

3. Այդ բարեաց փոխարէն ի՞նչ ընել կը վայէ մեզ .

Անոնց բարեաց փոխարէն մը չենք կրնար ընել, միայն թէ պարտք սեպելու ենք կրցածնուս չափ խնամք տանիլ և օգնել անոնց մանաւանդ իրենց ծերութեան և կարօտութեան ատեն :

5. Այդ պատուէրին հակառակ վարուող տղայք ի՞նչ կը լինին .

Այս պատուէրին անսաստող տղայք ծանր յանցանաց և պարտազանցութեան մէջ գտնուած ըլլալուն համար ծանրապէս կը պատժուին Աստուծով :

6. Մեր մեծերն ո՞վ են . .

Մեր մեծերն են մեր քահանայք, մեր սուտցիչք, իշխանք, վերջապէս մեզի բարիք ընողները, որոնք հոգեւոր ծնողք կը կոչուին :

7. Ի՞նչ ընելու ենք անոնց .

Անոնց միշտ յարգ ու պատիւ տանելու ենք, և երախտիքնին բնաւ մոռնալու չենք :

Գ Ա Ս Ժ Ջ.

Ձ. Է. Ը. Ք. ԵՒ Ժ. ՊԱՏՈՒԻՐԱՆՔ

1. Վեցերորդ պատուիրանով Աստուած ի՞նչ կը հրամայէ .

Կը հրամայէ որ սպանութիւն չընենք, այսինքն մեր և ուրիշին մահուանը կամ վշտին պատճառ չըլլանք :

2. Ի՞նչպիսի գործեր սպանութիւն են .

Սպանութիւն է ո՛չ միայն ուրիշը սրով մեռցնելը, այլ նաեւ անոր անունը կոտորելը, գրպարտութիւն ընելը, անիրաւ տեղ մարգու ձեռք վերցնելը, եւայլն :

3. Եօթներորդ պատուէրով ի՞նչ կը հրամայէ .

Կը հրամայէ շնութիւն չընել, այսինքն գէշ, աղտեղի եւ անբարոյական ընթացք չունենալ :

4. Ութերորդ պատուէրով ի՞նչ կը հրամայէ .

Կը հրամայէ գողութիւն չընել, այսինքն ուրիշին եղած ո՛ր և է բան առանց անոր գիտութեան գաղտուկ վերցնել :

5. Իններորդ պատուէրով ի՞նչ կը հրամայէ .

Կը հրամայէ սուտ բանի վկայ չըլլալ, այսինքն բնաւ երբէք սուտ չխօս-

**սիլ ոչ մեր օգտին համար և ոչ ուրիշին
չահուն կամ վնասուն համար :**

6. Տաներորդ պատուերով Աստուած ինչ կը
հրամայէ .

**Կը հրամայէ որ ուրիշին ունեցածը
ինչ որ ալ ըլլայ, վրան աչք չտնկենք ու
չյափշտակենք :**

Գ Ա Ս Ժ Է .

ՆԱՀԱՊԵՏՔ ԵՒ ՄԱՐԳԱՐԷՔ

1. Աստուած բոնց միջոցաւ կը կառավարէր Իս-
րայէլի ազգը .

Աստուած նահապետներով, Դա-



**տաւորներով, Մարգարէներով, և վեր-
ջապէս Թագաւորներով կը կառավարէր
Իսրայէլի ազգը :**

2. Մարգարէներն ինչ մարդիկ էին .

Մարգարէներն Հոգւով սրբով լըցուած արդար և սուրբ մարդիկ էին, որ Աստուծմէ պաշտօնի կը կոչուէին :

3. Ինչ էր ատոնց պաշտօնը .

Անոնք ժողովուրդը կը յորգորէին Աստուածապաշտութեան, և ետքի ըլլալիք բաները առաջուց կը գուշակէին :

4. Մարգարէից գուշակութիւնք ինչ բաներ էին .

Մարգարէք կանխաւ գուշակեցին Մեսիային աշխարհ գալը, Հրէաներէն անարգուիլն ու մեռնիլը, Հեթանոսաց դարձը, եւ այլն :

5. Հեթանոսներն ո՞վ են .

Մեսիան չեկած՝ Հրէաներէն ի գատ ամէն սոգգեր Հեթանոս կը կոչուէին, ինչպէս նաեւ մեր Հայոց ազգը :

6. Հեթանոսաց մէջ ի հսու մն Աստուածապաշտներ կային .

Հեթանոսաց մէջ ալ կային Աստուածապաշտներ, ինչպէս է Յոր երանելին և ուրիշներ :

7. Կրնա՞ս ըսել ինձ, որո՞նք են մարգարէք .

Մարգարէք են Մովսէս, Սամուէլ, Իսաի, Եսայի, Երեմիա, Բարուք,

**Դանիէլ, Եզեկիէլ, ինչպէս նաեւ Եզիա
և Եղիսէ :**

8. Ասոնցմէ զատ ուրիշներ ալ կան.

**Կան նաեւ տասներկու փոքր Մար-
դարէք ալ, որք են Ովսէէ, Ամովս, Յո-
վել, Աբթիու, Յովնան, Միքիա, Նա-
ւում, Ամբակում, Սոփոնիա, Անդէոս,
Զաքարիա և Մաղաքիա :**

9. Այդ մարգարէից խօսածները գրաւոր են.

**Եզիայէն և Եղիսէէն ի զատ բոլոր
մարգարէից խօսածները գրաւոր են,
որ և կը կոչուի Հին Կտակարան կամ
Աստուածաշունչ :**

10. Ինչո՞ւ համար Աստուածաշունչ կը կոչուի.

**Որովհետեւ Աստուծոյ շնչով կամ
ազդեցութեամբ գրեցին զայն մարգա-
րէք :**

Դ Ա Ս Ժ Է.

ԱՊՍԱՍՄԲՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏԻԺ ՇՐԷՑ

1. Իսրայէլացիք Աստուծոյ այնքան բարիքները
վայելելով հաւատարիմ մնացին.

**Իսրայէլացիք շատ անգամ ապե-
րախտութիւն ըրին Աստուծոյ դէմ
ծանր պատիժներ կրեցին :**

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԳԱՍ ՁԲ.

ԳԱԼՈՒՍՏ ԿԱՍ ՄԱՐԴԵՂՈՒԹԻՒՆ ՓՐԿՁԻՆ

1. Աստուծոյ խոստացած Փրկիչն այսինքն Մեսիանն աշխարհ եկա՞ւ .

Մարգարէից գուշակած ժամանակը աշխարհ եկաւ Մեսիանն, որ է Փրկիչն ձեր Յիսուս Քրիստոս :

2. Ո՞վ է Յիսուս Քրիստոս :

Յիսուս Քրիստոս Ամենասուրբ Երրորդութեան երկրորդ անձն է, այսինքն Որդին Աստուած :

3. Ե՞րբ եկաւ աշխարհ .

Քրիստոս աշխարհ եկաւ աշխարհի ստեղծուելէն իբր չորս հազար տարի ետքը, երբ Հրէից երկիրը Հռովմայեցւոց իշխանութեան տակ ինկած էր :

4. Ա՞յն ատեն Հռովմայեցւոց կայսրն ո՞վ էր .

Այն ատեն Հռովմայեցւոց կայսրն էր Օգոստոս, որոյ կողմէն Հրէից թագաւոր էր Հերովդէս Եգովմայեցին :

5. Որդին Աստուած ի՞նչպէս աշխարհ եկաւ .

Որդին Աստուած մարմին առնելով,

այսինքն մեղ նման մարդ ըլլալով աշխարհ եկաւ :

6. Որմէ՞ մարմին առաւ .

Մարմնացաւ Ս. Կոյս Մարիամէն , որ քղջիկն էր Յովակիմայ և Աննայի և նշանուած էր Յովսէփ անուն արդար մարգու մը :



7 Սուրբ կոյս Մարիամ որո՞ւն ցեղէն էր .

Ս. կոյս Մարիամ Յուդայի ցեղէն Գաւրիթ մարգարէի սերնդէն էր :

8. Ո՞ւր կը բնակէր .

Ս. Յովսէփայ հետ կը բնակէր Գաւրիայի Նազարէթ քաղաքը :

9. Ի՞նչպէս եղաւ Յիսուսի մարդեղութիւնը .

Գաբրիէլ հրեշտակապետ Աստուծոյ կողմանէ աւետեց Ս. Կոյս Մարիամու թէ Յիսուս իրմէ պիտի ծնանի :

10. Հրեշտակն ի՞նչպէս աւետեց Մարիամու .

Հրեշտակն այսպէս աւետեց «Ուրախ լեր բերկրեալդ, Տէր ընդ քեզ» :

11. Սուրբ Մարիամ ի՞նչ պատասխանեց .

Ս. Մարիամ տակնուվրայ եղաւ և սկսաւ մտածել . բայց հրեշտակը վստահացուց զնա :

12. Ի՞նչպէս .

Ըսաւ թէ Յիսուս Բրիստոս՝ Հոգւով սրբով իրմէ պիտի ծնանի :

13. Սուրբ Մարիամ ատոր ի՞նչ պատասխանեց .

Ս. Մարիամ այսպէս պատասխանեց առ այս «Ահաւասիկ կամ ազախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում, և յղացաւ :

14. Ուրեմն Սուրբ Մարիամ Աստուածամայր կրնա՞յ ըսուիլ .

Ս. Մարիամ անուարակոյս Աստուածամայր կ'ըսուի, վասն զի իր ծնած որդին ի՞նչ միայն մարդ էր, այլ և Աստուած և Աստուծոյ որդի էր :

Պ Ա Ս Ի.

Ս. ԾՆՈՒՆԴ ՅՅՍՈՒՍԻ

1. Սուրբ Մարիամու յղութեան ատեն ինչ տեղի ունեցաւ .

Ս. Մարիամու յղութեան ատեն Օգոստոս կայսր հռովմայեցւոց՝ հրաման ըրաւ աշխարհագիր ընել իր իշխած երկիրներուն մէջ :

2. Աշխարհագիր ինչ ըսել է .

Աշխարհագիր՝ մարդահամար ըսել է . այսինքն երկրի մը մէջ որչափ մարդ գտնուիլը դրի առնել :

3. Այդ աշխարհագրէն ինչ հետեւեցաւ Սուրբ կոյս Մարիամու .

Այն ատեն Ս. կոյս Մարիամ ե Յովսէփ՝ Նազարէթ քաղաքէն ելնելով Բեթղեհեմ եկան արձանագրուելու համար :

4. Ինչո՞ւ համար Բեթղեհեմ եկան .

Վասն զի երկուքն ալ Դաւթի ցեղէն ըլլալով հարկ էր որ Դաւթի քաղաքը գտնուէին :

5. Բեթղեհեմի մէջ ո՞ւր բնակեցան .

Այրի մը մէջ բնակեցան . վասն զի իջեւանի տեղ չունէին :

6. Հոն ինչ տեղի ունեցաւ .

Ս. Կոյս Մարիամու ծննդեան ժամանակները հասած ըլլալով, հոն այրին մէջ ծնաւ Յիսուսը, զոր խանձարով պատեց :

7. Ո՞ր օր եղաւ Յիսուսի ծնունդը .

Յիսուսի ծնունդն եղաւ Յունվար ամսոյ 6ին (1), ինչպէս որ Հայոց Ս. Եկեղեցին կը տօնէ մինչեւ ցայսօր :



8. Յիսուսի ծնած ըլլալն ինչպէս իմացուեցաւ .

Աստուծոյ հրեշտակը Բեթղէհէ մի մօտ գտնուող բացօթեայ հովիւներուն աւետեց ըսելով «Ուրախացէ՛ք, Յիսուս Փրկիչ ծնաւ » :

(1) Գրիստոսի Ս. Ծննդեան տօնը Յունվար 6ի տեղ Դեկտ. 25ին կատարելու փոփոխութիւնը Գ. Իարու վերջերը սկսած է, որուն՝ Հայոց եկեղեցին համակերպած չէ :

9. Ուրիշ հրեշտակներ ալ իջան յերկից .

Ուրիշ շատ հրեշտակներ ալ իջան
և սկսան երգել, «Փնփն ի բարձունս
Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն ի
մարդիկ հաճութիւն» :

10. Հովիւներն այդ լսելով ինչ ըրին .

Հովիւք վազեցին Բեթղեհեմ եկան
և մտուրին մէջ Յիսուսը գտնելով անոր
երկրպագութիւն ըրին :

Գ Ա Ս Ի Ա .

ԵՐԿՐՈՒԳՈՒԹԻՒՆ ՄՈԳՈՒՑ

1. Հովիւներէն ի զատ ուրիշներ ալ եկան Յիսուսը
տեսնելու .

Հովիւներէն զատ Արեւելքի կողմէն
երեք մողեր ալ եկան, որ գիտուն
և շատ հարուստ մարդիկ էին :

2. Անոնք ինչպէս գիտցան որ Յիսուս ծներ է .

Ասոնք երկնքի վրայ նշանաւոր աստղ
մը տեսած ըլլալով, հասկցան որ մեծ
թագաւոր մը ծներ է :

3. Ինչպէս գտան ծնած տեղը .

Այս մողեր երբ Երուսաղէմ հասան,
սկսան հարցնել թէ ո՞ւր է նոր
ծնած թագաւորը, և վերջապէս գտնե-

լով անոր երկրպագութիւնն ըրին և ըն-
ծայ տուին ոսկի, խունկ և դմուռս⁽¹⁾ :

4. Հերովդէս թագաւոր լսեց Յիսուսի ծաննելը :
Հերովդէս լսեց ու շատ վախցաւ ,
և մոգերուն ապսպրեց որ իրեն ալ
իմաց տան տեղը , երբոր դտնեն :



5. Ասիկա ի՞նչ մտքով պատուիրեց .

Ասիկա այն մտքով պատուիրեց որ
Յիսուսը մեռցնել տայ , վասն զի կը
վախնար որ չլլայ թէ Յիսուս իրեն
տեղ թագաւորէ :

6. Կրցա՛ւ այդ չար խորհուրդը կատարել .

Բայս այս դիտաւորութիւնը չկրցաւ
կատարել , վասն զի մոգերը ուրիշ ճամ-
բով իրենց տեղը դարձան :

(1) Այսպիսի ընծայք թագաւորաց և աստուածոց
կը նուիրուէին ի հունմն :

7. Ո՛վ պատուիրեց անոնց որ այդպէս ընեն .

**Աստուծոյ հրեշտակը երազնուն
մէջ անոնց երեւնալով պատուիրեց :**

8. Հերովդէս չբարկացա՞ւ մոգերուն այդ ըրածին .

**Հերովդէս սաստիկ բարկացաւ , և
հրաման ըրաւ որ Բեթղէհէմի և անոր
սահմաններուն մէջ գտնուած երկու
տարուրնէ վար եղող տղաքները ջար-
դուին :**



9. Ինչո՞ւ համար այդ անգթութիւնն ըրաւ .

**Որպէս զի Յիսուս ալ այդ անմեղ
մանկանց մէջ գտնուելով սպաննուի :**

10. Հերովդէսի այդ չար դիտաւորութիւնը կա-
տարուեցա՞ւ .

**Հերովդէսի այդ չար դիտաւորու-
թիւնը չկատարուեցաւ . վասն զի հրեշ-**

տակին խրատով Յովսէփ Յիսուսը մօրը
հետ առնելով Եգիպտոս փախուց ։

11. Մինչեւ ետքը հոն մնացին ։

Քանի մը տարի միայն հոն կեցան,
և երբ հերովդէս մեռաւ, զարձեալ
հրեշտակին խորհրդով հրէից երկիրը
զարձան ու Նաղարէթ բնակեցան ։

Պ Ա Ս Ի Բ.

ԸՆԾԱՅՈՒՄՆ ՅԻՍՈՒՍԻ Ի ՏԱՃԱՐՆ

1. Յիսուս Եգիպտոս չտարուած ինչ պատահեցաւ .

Յիսուս ու թ օրուան ըլլալուն պէս
հրէից սովորութեան համեմատ թըր-
փատուելով Յիսուս այսինքն Փրկիչ կոչ-
ուեցաւ ։ (Ղուկ. Բ. Գլ. 21 համար ։)

2. Անկէ ետքը ինչ եղաւ .

Երբոր Յիսուս քառասուն օրուան
եղաւ, Մարիամ Աստուածածին զԱնի
տաճարը տարաւ, և հետը երկու տաս-
րակ կամ աղաւնեղ ձաղեր առաւ ։

3. Ինչո՞ւ համար առաւ զանոնք .

Տաճարին մէջ զանոնք Աստուծոյ
պատարազ մատուցանելու համար,
վասն զի Մովսիսական օրէնքը այնպէս
կը հրամայէր ։

4. Այդ միջոցին ի՞նչ պատահեցաւ .

Միմէօն անունով ծերունի մը՝ որ Սուրբ Հոգիէն խոստումն առած էր Փրկիչը տեսնել և ապա մեռնիլ, նոյն միջոցին տաճարին մէջ գտնուեցաւ :

5. Ի՞նչ ըրաւ այդ ծերունին .

Սա երբ Յիսուսը տեսաւ, գիրկը առաւ, օրհնեց և ըսաւ. «Ահա աչքս տեսաւ Փրկիչը, ալ սակէ ետքը թող մեռնիմ» :



6. Միմէօն ծերունին Յիսուսի համար ի՞նչ խօսեցաւ .

Յիսուսի համար մարդարէական հոգւով ըսաւ. «Ահա սա կայ ի գլուխումն և ի կանոնումն բազմաց ի մէջ Իսրայէլի և ի նշան հակառակութեան» (Ղուկ. Բ. Գլ. 34 համար):

7. Այդ խօսքով ի՞նչ հասկցնել ուզեց .

Այս խօսքով հասկցնել ուզեց թէ

Իսրայէլացւոց մէջէն շատերը կատարելապէս հաւատալով Քրիստոսի պիտի փրկուին, շատերն ալ անհաւատութեամբ պիտի կորսուին :

8. Ա. Աստուածամօր ալ բան ըսաւ .

Ա. Աստուածամօր ալ այսպէս ըսաւ .
“Եւ ընդ քո իսկ անձն անցցէ սուր . զի յայտնեսցին ի բազում սրտից խորհուրդք ” :

9. Ասով ի՞նչ հասկցնել ուզեց .

Ասով հասկցնել ուզեց որ սուրբ Աստուածամօր սիրտը պիտի վիրաւորուէր իր որդւոյն Յիսուսի չարչարանքը և հրէից հակառակու թիւնը տեսնելով :

10. Սիմէօն ծերունիէն դատ ուրիշ ո՞վ գտնուեցաւ տաճարին մէջ :

Տաճարին մէջ էր նաեւ Աննա մարգարէն, որ 84 տարեկան որբուայրի կին մ'էր, և դիշեր ցերեկ չէր հեռանար անկէ :

11. Այդ կինն ի՞նչ ըրաւ .

Այս կինը Յիսուսը տեսնելուն պէ փառք տալով Աստուծոյ, սկսաւ անոր Փրկիչ ըլլալը քարոզել ժողովրդեան :

Գ Ա Ս Ի Գ.

ՄԱՆԿՈՒՅԻՆ ՅՄՈՒՍԻ

1. Յիսուս նազարէթի մէջ ինչպէս կեանք անցուց .

Յիսուս շնորհօք և իմաստութեամբ մեծցաւ և միշտ հնազանդ էր իր ծնողաց, որոց հետ ամէն տարի Զատիկի տօնին Երուսաղիմայ տաճարը կ'երթար ուխտի :

2 Ինչ զարմանալի գործ ցուցուց Յիսուս երբ տասներկու տարեկան էր .

Յիսուս իր ծնողաց հետ ըստ սովորութեան տաճարը գացած ըլլալով այս անգամ առանց անոնց գիտութեան հոն մնաց :

3. Ինչ ըրաւ հոն .

Հրէից վարդապետներուն հետ անակ իմաստութեամբ խօսեցաւ որ բոլոր լսողները զարմացան :

4. Ինչո՞ւ համար զարմացան .

Վասն զի անոնք Յովսէփայ տղան կարծելով զՆա կ'ըսէին թէ այս տղայ հասակին մէջ ինչպէս գիտէ այս բաները, զոր բնաւ սորված չէ :

5. Յիսուսի ծնողք յետոյ զինքը չփնտուեցին .

Յիսուսի ծնողք զանի ի զուր փնտը-
ռելէ յետոյ՝ նորէն Երուսաղէմ դարձան
և զանի գտան տաճարին մէջ, ուր երբ
սուրբ Աստուածածին իր տառապանքն
Անոր յայտնեց, Յիսուս ըսաւ. «Չէ՞ք
գիտեր որ իմ հօրս տան մէջ պէտք է
ըլլամ», * (Լուկ. Բ. Գլ. 49. համար)

6. Յիսուսի Տեառն մերոյ այդ ընթացքն ինչ կը
սորվեցնէ .

Յիսուսի այս ընթացքը կը սորվե-
ցընէ որ տղայք պէտք է որ խոնարհու-
թեամբ և սիրով միշտ հնազանդ ըլլան
իրենց ծնողաց, և աճին Աստուծոյ
շնորհքով :

7. Ուրիշ .

Նաեւ պէտք է ի մանկութենէ վար-
ժուին տղայք ազօթասիրութեան և
աստուածպաշտութեան, եկեղեցի գի-
մեն յաճախ և սորվին ու կատարեն
իրենց կրօնական պարտքերը :

8. Յիսուս ինքզինքը երբ յայտնեց աշխարհի .

Յիսուս ինքզինքն յայտնեց աշխարհ.
հի իւր մկրտութենէն յետոյ, որ կա-
տարուեցաւ ի ձեռն Յովհաննու Մկրտչի :

Գ Ա Ս Ի Դ .

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ

1. Յովհաննէս Մկրտիչ ո՞վ էր :

Յովհաննէս Մկրտիչ Զաքարիա ա-
նուն քահանայի մը որդին էր, որուն
մօրը անունը Եղիսաբեթ էր :

2. Յովհաննէս Մկրտիչ ե՞րբ ծնաւ .

Յովհաննէս՝ Քրիստոսէ իբր վեց
ամիս առաջ հրաշքով ծնաւ :

3. Ինչո՞ւ ըսիր հրաշքով ծնաւ .

Վասն զի նորա հայրն ալ մայրն ալ
տարիքնին առած ծերունիներ էին,
մանաւանդ որ Եղիսաբեթ ամուլ էր :

4. Ուրեմն ի՞նչպէս ծնաւ Յովհաննէս .

Աստուած Զաքարիայի և նորա կնոջ
արդարութեանը համար այս շնորհալի
զաւակը տուաւ անոնց, որ մարգարէից
մէջ ամենէն մեծ և սուրբ մարդն եզաւ :

5. Յովհաննէս երբոր մեծցաւ ի՞նչպէս կ'ապրէր .

Յովհաննէս անապատը կը բնակէր,
կ'աւտէր մարախ և մեղր վայրենի, բրդե-
ղէն կը հագնէր և մաշկեղէն գօտի կը
կապէր :

6. Ինչ պաշտօն կը վարէր.

Յովհաննէսի պաշտօնն էր Հրէաները Մեսիայի գալստեան պատրաստել, և ասոր համար կարապետ ալ կաշուեցաւ, որ առաջնորդ ըսել է:



7. Յովհաննէս ուրիշ պաշտօն ալ ունէ՞ր.

Յովհաննէս կը քարոզէր և ժողովուրդը ապաշխարութեան կը յորդորէր և ապաշխարողներն ալ կը մկրտէր Յորդանան գետին մէջ:

8. Հրէայք Յովհաննէսի վրայ ինչ կարծիք ունեցան.

Հրէայք կարծեցին որ Յովհաննէս՝ Մեսիան սյսինքն Քրիստոսն է. բայց ինքն ըսաւ որ Քրիստոսը ես չեմ, այլ անոր կարապետն եմ:

Գ Ա Ս Ի Ե .

ՄԿՐՏՈՒՅԻՒՆ ՅԻՍՈՒՄԻ

1. Յիսուս երբ Մկրտուեցաւ Յովնաննէս Մկրտիչէն .

Յիսուս իր ծննդեանէն երեսուն տարի վերջը դարձեալ Յունուար վեցին մկրտուեցաւ :

2. Յիսուս ալ մեղաց թողութեան համար մկրտուեցաւ .



Յիսուս մեղաց թողութեան համար չմկրտուեցաւ , վասն զի Նա սուրբ և արբութեան աղբիւր էր :

3. Հապա ինչո՞ւ համար մկրտուեցաւ .

Անոր համար մկրտուեցաւ որ խո-

Նարհութեան և ապաշխարութեան
օրինակ ըլլայ մարդոց, և մանաւանդ
որ՝ շուրջ սրբելով մեր մկրտութեան
խորհուրդը հաստատէ ։

4. Յիսուսի մկրտուած ատեն ինչ պատահեցաւ .

Մկրտութեան ատեն Աստուածա-
յին երրորդութեան խորհուրդը հրա-
շարի կերպով յայտնուեցաւ ։

5. Ինչպէս .

Հոգին սուրբ ազաւնւոյ կերպարան-
քով Յիսուսի վրայ իջաւ և Հայր Աս-
տուած վկայեց յերկնից թէ Յիսուս
է Աստուծոյ սիրելի որդին ։

6. Յովհաննէս Մկրտիչ Յիսուսը մկրտելէն ետքը
ինչ եղաւ .

Ժամանակէ մը յետոյ Գալիլիացւոց
Հերովդէս Անդիպաս թաղաւորն զՅով-
հաննէս բանտարկեց, ուր մնաց երկու
տարւոյ չափ ։

7. Ինչո՞ւ համար բանտարկեց .

Վասն զի Յովհաննէս խստիւ կը
յանդիմանէր զՀերովդէս իւր անվտայել
ու չար գործերուն համար ։

8. Վերջն ինչ եղաւ .

Յետոյ Հերովդէիս անուն անառակ

կնկան մ'աղջիկը Հերովդէսին հաճոյանալով, իւր մօր խրատով Յովհաննէսին գլուխն ուզեց:

9. Հերովդէս ինչ ըրաւ.

Հերովդէս ալ իւր ըրած երդումը ետ չառնելու համար բանտին մէջ գլխատել տուաւ զՅովհաննէս:

Գ Ա Ս Ի Ջ.

ԸՆՏՐՈՒՅԻՒՆ ԱՌԱՔԵԼՈՑ

1. Յիսուս Մկրտուելէն ետքը ինչ ըրաւ.

Մկրտութենէն յետոյ Երիքովի առնապատր զնաց. հոն քառասուն օր քառասուն գիշեր ծով պահեց և յետոյ սատանայէն փորձուեցաւ և յաղթեց անոր:

2. Ինչո՞ւ համար փորձուեցաւ.

Որպէս զի օրինակ տայ մեզի իր շնորհքովը սատանային փորձութեանց յաղթելու:

3. Քրիստոսի փորձութեան վերջն ինչ եղաւ.

Յետ այս փորձութեան սատանան խայտառակ եղած ամօթով մեկնեցաւ, և հրեշտակները մօտենալով կը ծառայէին Քրիստոսի:

4. Քրիստոս անապատէն դառնալով Ինչ ըրաւ .
Քրիստոս աշակերտներ ժողովեց ու
րոնք թուով տասներկու էին , ասոնք
Առաքեալ կոչուեցան որ ղրկուած
ըսել է :

5. Ինչ մարդիկնր էին ասոնք .

Առաքեալք՝ անուսումն բայց սրբ-
տով և հոգւով բարի մարդիկ էին :

6. Ինչ էին ասոնց անունները .

Ասոնց անուններն էին

Ա. Պետրոս :

Բ. Անգրէաս :

Գ. Յակոբոս :

Դ. Յովհաննէս :

Ե. Փիլիպպոս :

Զ. Բարթուղիմէոս :

Է. Մատթէոս :

Ը. Յակոբոս Ալփեայ :

Թ. Թովմաս :

Ժ. Թադէոս կամ Ղերբէոս :

ԺԱ. Սիմոն Կանանացի :

ԺԲ. Յուզայ Իսկարիովտացի :

7. Ասոնցմէ զատ Յիսուս ուրիշ աշակերտներ ալ
ունեցաւ :

Առաքեալներէն ի զատ Յիսուս ու-

րիչ եօթանասունն աշակերտներ ալ ժողովեց, և ասոնք ամենքը քարոզելու կը ղրկէր ։

8. Յիսուս այս ընտրութիւնները կատարելէ յետոյ ինչ ըրաւ .

Յիսուս Գալիլիայի Նազարէթ քաղաքէն սկսելով բոլոր Հրէից երկիրը պտտեցաւ և քարոզեց ամեն տեղ ։

9. Ռբախի տեղեր քարոզեց .

Քարոզեց Յիսուս նախ տաճարին մէջ, Հրէից ժողովարանները, ապա լերան գլուխը, տունը, դաշտերը, արտերը, ծովեղերքը, նաւակի մէջ, անապատները եւ այլն ։

Գ Ա Ս Ի Է .

ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆ ՅՍՈՒՍԻ, ՕՐԷՆՔ

1. Յիսուս իր քարոզութեանց մէջ ինչպիսի բաներ սորվեցուց .

Յիսուս սորվեցուց մարդոյն առ Աստուած, առ ընկերն և առ անձն պարտաւորութիւնները, որ կը բովանդակին բնական և գրական օրինաց մէջ ։

2. Ո՞րն է բնական օրէնքը .

Խղճմտանքն է բնական օրէնք :

3. Ինչո՞ւ համար խղճմտանքը օրէնք կը կոչուի .

Վասն զի ամեն բանէ առաջ խիղճը մարդու կը սորվեցնէ աղէկն ու գէշը :

4. Ինչո՞ւ համար բնական կը կոչուի .

Խիղճը՝ բնական օրէնք կը կոչուի անոր համար որ մարդկային հոգւոյ սկզբնական մէկ զօրութիւնն է ան :

5. Ատով ի՞նչ հասկնալու ենք .

Ասկէ հասկնալու ենք որ խղճի օրէնքը մարդու բնութեանը մէջ իր ծնած օրէն տպաւորուած է, ետքէն վարժութեամբ ստացուած բան չէ :

6. Բնական օրէնքէն գլխաւորապէս ի՞նչ պիտի սորվինք .

Բնական օրէնքէն երկու բան կը սորվինք . Ա. Ընել ուրիշին այն բանը՝ զոր ուրիշին մեզ ընելը կ'ուզենք : Բ. Չընել ուրիշին այն բանը՝ զոր ուրիշին մեզ ընելը չենք ուզեր :

7. Դրական օրէնքն ո՞րն է .

Դրական օրէնք են Տասնաբանեւ պատուիրանքներն, զոր Քրիստոս նորէ հաստատեց :

8. Այս օրէնքէն ի զատ Յիսուս ուրիշ ինչ բաներ սորվեցուց .

Այս օրէնքէն ի զատ Յիսուս սորվեցուց նաեւ մեր ընկերը սիրել նոյն իսկ մեր անձին պէս, և բարիք ընել մեր թշնամեաց և ատելեաց իսկ :

9. Ինչ պատուէրներ աւանդեց Յիսուս գլխաւորապէս .

Նաեւ պատուիրեց մեղքերէ հեռի կենալ, ճշմարիտ խօսիլ, այլոց չարիք չընել և միշտ առ Աստուած աղօթել փորձութեան մէջ չիյնալու համար :

Գ Ա Ս Ի Ը .

Ա Ղ Օ Թ Ք

1. Ո՞ր աղօթքն է որ Յիսուս Քրիստոս սորվեցուցած է .

Յիսուսի Քրիստոսի սորվեցուցած աղօթքն է Տէրունական աղօթքը, որ այսպէս է . «Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո : Եկեսցէ արայու թիւն քո : Եղիցին կամք քո որ էս յերկինս և յերկրի : Զհաց մեր անապաղորդ տուր մեզ այսօր : Եւ ող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք

Թողումք մերոց պարտապանաց : Եւ
մի տանիք զմեզ ի փորձութիւն : Այլ
փրկեա ի չարէ, զի քո է սրբայու-
թիւն և զօրութիւն և փառք յա-
ւիտեանս. Ամէն :



2. Ինչ խնդրուածքներ կան այդ աղօթքին մէջ.
Այս աղօթքին մէջ եօթն խըն-
դրուածքներ կան, որք են.

Ա. Ով հայր մեր երկնաւոր, քու
անունդ սուրբ ըլլայ :

Բ. Քու սրբայութիւնդ թող գա :

Գ. Քու կամքդ ըլլայ երկրիս վրա,
ինչպէս երկնից մէջ :

Գ. Մեր ամենաւուր հացը այսօր
ալ տուր մեզի :

Ե. Ներէ մեր յանցանքը, ինչպէս որ
մենք ալ կը ներենք մեզ պարտապան
եղողներուն :

Զ. Մեղ փորձութեան մէջ մի ձգեր :

Է. Մեզ չարէն փրկէ, փասնդի
քուկդ է արքայութիւնը, փառքը, զօ-
րութիւնը յաւիտեանս ամէն :

3. Աստուծոյ առաւելապէս ինչ խնդրել սորվե-
ցուց Յիսուս .

Խնդրեցէք, ըսաւ Յիսուս, Աստու-
ծոյ արքայութիւնը և արդարութիւնը,
և ուրիշ ամէն բան կը տրուի ձեզի :

4. Ե՛րբ աղօթելու ենք .

Իւրաքանչիւր ոք պարտի ջերմե-
ռանգ սրտիւ աղօթել ամէն ատեն, մա-
նաւանգ առաւօտ և երեկոյ :

5. Աղօթքը քանի կերպով կը կատարուի .

Աղօթքը երկու կերպ կը լլայ, առան-
ձին և հրապարակաւ :

6. Առանձին աղօթքը ո՞րն է .

Առանձին աղօթքը այն է որ մինակ
իւր ի կամ սենեակի մը մէջ կը կա-
տարուի :

7. Հրապարակական աղօթքը ո՞րն է .

Հրապարակային աղօթքը այն է որ
Սկեղեցիներու մէջ հաւատացելոց բազմութեամբ և միաձայն կրկատարուի :

8. Ի՞նչ բարոյական խրատներ տուած է Յիսուս .

Խրատեց Յիսուս որ .

Ամենքնիս շերմեռանգաբար սիրենք զԱստուած :

Աստուծոյ խօսքերն արգիւնաւորենք :

Զիրար սիրենք և իրարու յանցանքներենք :

Մեր ընկերին օգնենք կարեկցութեամբ :

Աստուծոյ զթութեան ապաւինինք որչափ որ մեղաւոր ալ ըլլանք :

Աղքատասէր ըլլանք և ողորմութիւն տանք :

Աշխատութեան հետեւինք :

Հեզ և խոնարհ ըլլանք :

Աշխարհի վրայ յոյս չդնենք :

Բարի գործերով պատրաստ գտնուինք Քրիստոսի ներկայանալու :

Այս ամէն խրատները գեղեցաւակներով և օրինակներով հասկնալու ըրաւ ժողովրդեան :

Գ Ա Ս Ի Փ.

ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՔ ՅՒՍՈՒՍԻ

1. Ի՞նչ են Յիսուսի հրաշագործութիւնք.

Յիսուսի գործած հրաշագործութիւնք են հիւանդներու, ցաւագարներու և դիւահարներու բժշկութիւնք համբերուն խօսիլը, անդամալոյծներուն ոտք ելլելը, մեռելոց յարութիւնք :

2. Յիսուսի գործած հրաշքներուն առաջինը ո՞րն է.

Յիսուսի առաջին հրաշքը՝ ջուրը գինիի փոխելն է, զոր կատարեց Կանա Քալիլիացոց հարսնիքին մէջ :

3. Այդ ի՞նչպէս եղաւ.

Երբ Մարիամ Աստուածածին հարսանեաց գինւոյն հատած ըլլալն յայտնեց Յիսուսի, նա իւր մօրը խօսքը պատուելու համար հոն գտնուած վեց թակոյկները ջրով լեցնել տուաւ, որ եղաւ անուշ և պատուական գինի :

5. Ո՞ր հիւանդները կը յիշուին յանուանէ և բժշկուեցան.

Յիսուսի բժշկած հիւանդներն են սփառնայումցի տղան, տասն բորոտերը, Քանանացի կնոջ աղջիկը, եւայլն :

5. Կափառնայումցի տղան ի՞նչպէս բժշկուեցաւ .

Կափառնայումի մէջ տղայ մը հիւանդ պառկած էր, անոր հայրը որ երեւելի իշխան մ'էր, եկաւ Գալիլիա Յիսուսի քով, և աղաչեց անոր որ գայ ու տղան բժշկէ . Յիսուս անոր ըսաւ «Երթ որդին քո կենդանի է» : Իշխանը հաւատալով տուն գնաց ու տղան բժշկուած դուսաւ :

6. Տասն բորտաները ի՞նչպէս բժշկուեցան .

Անգամ մը Յիսուսի անցնելու ատեն տասն բորտաներ սկսան աղաղակել, «Յիսուս, ողորմեաց մեզ», Յիսուս զամենքն ալ բժշկեց, բայց անոնցմէ մէկը միայն որ Սամարացի էր, դարձաւ շնորհակալ եղաւ Յիսուսի, ուստի Յիսուս անոր ըսաւ «Գնա՛, հաւատքդ քեզ ապրեցուց», :

7. Քանանացի կնոջ աղջիկն ի՞նչպէս բժշկուեցաւ .

Քանանացի կինը՝ թէեւ կռապաշտ՝ բայց հաւատքով կ'աղաչէր Յիսուսի, «Որդի Դաւթի ողորմեա ինձ, դուստրիմ չարաչար այսահարի», ըսելով : Յիսուս անոր ըսաւ . «Չվայլեր տղոց ձեռքէն հացը առնել և շուներուն տալ :

8. Կինը ասոր ի՞նչ պատասխան տուաւ .

Կինը խոնարհութեամբ պատասխանեց թէ «Տէ՛ր, շուներն ալ իրենց տիրոջ սեղանէն ինկած փշրանքներով կ'սպրին», Յայնժամ Յիսուս հեթանոս կնկան հաւատքը գովելով ըսաւ . «Ով կին, հաւատքդ մեծ է, ուղածիդ պէս թող ըլլայ», այս ըսելուն պէս անոր աղջիկը բժշկուեցաւ :

9. Յիսուս ո՞ր դիւահարը բժշկեց .

Յիսուս բժշկեց նաեւ Մարիամ Մագթաղենացին, որմէ եօթն դեւ հանեց :

Գ Ա Ս Լ .

ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԿՈՒՐԱՑ ԵՒ ԱՆՂԱՄԱԼՈՒԾԱՅ

1. Յիսուս ո՞ր կոյրերուն աչքը լուսաւորեց .

Յիսուս Բարտիմէոսին և ի ծնէ կուրին աչքերը բացաւ :

2. Բարտիմէոս ո՞վ էր .

Բարտիմէոս՝ Երիբովի մօտ ճամբուն վրայ մուրացիկ մ'էր կոյր աչքերով :

3. Յիսուս ի՞նչպէս բժշկեց զնա .

Երբոր Յիսուս կ'անցնէր, կոյրը սուլաց, «Յիսուս որդի Դաւթի, ողորմեա

ինձ», Յիսուս ալ զանի կանչելով ըսաւ
«Քու հաւատքդ քեզ ապրեցուց», և
խկոյն անոր աչքերը բացուեցան ։

4. Ի ծնէ կոյրն ո՞վ էր .

Ի ծնէ կոյրը մուրացկան մ'էր որ
Երուսաղիմայ տաճարին դրան տակ կը
նստէր ։



5. Յիսուս ի՞նչպէս բժշկեց զնա .

Յիսուս դեսնէն հող առնելով
թքովը թրջեց և կուրին աչքին ծե-
փելով հրամայեց որ երթայ Սերովամայ
աղբիւրէն լուացուի . կոյրը այսպէս
ընելով սկսաւ համարձակ տեսնել ։
անանկ որ ամէն մարդ զտրմացաւ ։

6. Ո՞ր անդամաւոյ՞ն է այն զոր Յիսուս բժշկեց .

Յիսուս շատ անդամաւոյ՞ններ առող-

**Չացուց, որոց մէջ նշանաւոր է այն որ
38 տարիէ ի վեր կը մնար Երուսաղիմ
մայ Պրոպատիկէ աւաղանին քով :**

7. Ինչո՞ւ համար կը մնար հոն .

**Վասն զի հրեշտակ Աստուծոյ տա-
րին անգամ մը իջնելով աւաղանին ջու-
րը կը խառնէր, և այն պահուն ով որ
առաջ ջուրը նետուէր, նա կը բժշկուէր :**



8. Ինչո՞ւ համար անդամալոյծն այդ միջոցէն
օգուտ չէր քաղեր .

**Անդամալոյծն ասկէ չէր օգտուած,
վասն զի օգնական մը չէր ունեցած
զինքն ջուրը նետելու :**

9. Ուրեմն Յիսուս Բնչ ըրաւ այդ մարդուն .

**Յիսուս այս մարդուն ըսաւ . «Ել ան-
կողինդ ան ու գնա՛», և խակոյն ան-
դամալոյծն առողջանալով գնաց :**

Գ Ա Ս Լ Ա .

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՌԵԼՈՅ, ԱՌԱՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԻ

1. Յիսուսի յարուցած մեռելները որո՞նք են .

Յիսուս կենդանացուց Յայրոսի աղջիկը, այրի կնոջ մը տղան և Ղազարոսը :

2. Յայրոս ո՞վ էր .

Յայրոս՝ Հրէից ազգէն բարեպաշտ իշխան մ'էր :



3. Ատոր աղջիկը Յիսուս ի՞նչպէս կենդանացուց .
Յիսուս մեռելին քով մօտենալով կանչեց «Տալի՛ժաւ կու՛մի», այսինքնն ո՞վ աղջիկ, է՛ր, բտաւ, և իսկոյն աղջիկը կենդանացաւ .

4. Այրի կնոջ տղան ի՞նչպէս կենդանացուց .

Այրի կնոջ տղան իւր մօր մէկ հա-

տիկ զաւակն էր, զոր երբ թաղելու կը տանէին Նային քաղաքէն դուրս, Յիսուս գթարով դադաղին մօտեցաւ և ըսաւ «Մ'ըռեակ, ել կայնէ» . մեռելը իսկոյն դադաղին մէջ նստաւ .

5. Ղաղարոս ո՛վ էր .

Ղաղարոս Յիսուսի բարեկամն էր, որ Երուսաղիմայ մօտ Բեթանիս դիւղը կը բնակէր :



6. Աս ալ չը թաղուած կենդանացաւ .

Ասիկա չորս օրուան թաղուած ըլլալէն ետքը յարութիւն առաւ :

7. Ի՞նչպէս .

Երբ մեռնողին քոյրերն և Հրէայք ոմանք անոր մահուան վրայ տրտմած կուլային յստահատ, Յիսուս դերեզմանին մօտ եկաւ, և բարձր ձայնիւ

կանչեց, «Ղա՛ղարոս, ել, դուրս եկուր»,»
8 Ղաղարոս այդ ձայնը լսեց.

Ղաղարոս իսկոյն պատանքով դուրս
ելաւ դերեզմանէն :

9. Յիսուս ինչ հրաշքներ գործեց.

Յիսուս ծովը ձուկ չեղած ստեն՝
Պետրոսին և ընկերներուն ուռկանները



ձկով լեցուց, ծովուն կատղած ալիքներն
ու հովը սաստելով հանդարտեցուց :

10. Ուրիշ.

Ծովուն վրայ ոտքով քալեց, և
մանաւանդ երկուանդամ քիչ մը հացը
և ձուկն օրհնելով շատ մարդիկ կըշ-
տացուց :

11. Առաջին անգամ քանի՞ հացով քանի՞ մարդ
կշտացուց.

Հինգ հացով և երկու ձկով հինգ

Հազար մարդ կշտացուց, որոնք տասներկու սակառ «սեբեթ» սլ Հայցի կտորուանք աւելցուցին :

12. Երկրորդ անգամ քանի՞ հացով քանի՞ մարդ կշտացուց .

Եօթն հացով և քանի մը ձուկերով չորս հազար մարդ կշտացուց, որոնք



Եօթն զամբիւղ «գեմպի» Հայցի կտորուանք աւելցուցին :

13. Սատերին հրաշքը ո՞րն է .

Անգամ մը երբ Հարկահանք (տուրք ժողովող) եկան Յիսուսէն տուրք կ'ուզէին, Պետրոս Յիսուսի հրամանաւ ծովէն հանած ձկան փորէն սատեր⁽¹⁾ մը գտնելով Հարկահանաց տուաւ :

(1) Սատեր՝ տեսակ մը ստակ է չորս տրամի չափ :

Գ Ա Ս Ա Ք .

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՓԱՌԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ

1. Յիսուս իր քարոզութիւններն ու հրաշքները կատարելէ յետոյ ինչ եղաւ .

Յիսուս իւր չարչարանաց մօտ աշակերտներէն երեքը Պետրոսը, Յակոբոսն և Յովհաննէսը առած Թափոր լեռը ելաւ և Հոն անոնց առջին այլակերպեցաւ :



2. Այլակերպիլ ինչ ըսել է .

Յիսուսի երեսը արեւու պէս փայլուն, զգեստներն ալ ձիւնի պէս ձերմակ երեւցան :

3. Հոն ուրիշ մարդիկ ալ երեւցան .

Հոն Մովսէս և Եղիա մտրգարէներն ալ երեւնալով խօսեցան Յիսուսի հետ իւր մահուան վրայ :

4. Յետոյ ի՞նչ եղաւ .

Երբ առաքեալք ապշած էին, և կուզէին միշտ հոն մնալ, յանկարծ ամպ մը զանոնք ծածկեց, և երկինքէն հայր Աստուած վկայեց ըսելով «Դա է որդի իմ սիրելի, դմա լուարուք» :

5. Առաքեալք զայդ լսելով ի՞նչ ըրին .

Առաքեալք վախնալով երեսի վրայ ինկան . և երբ Յիսուս զանոնք կանգնեցուց, իրմէ զատ մէկը չտեսան :

6. Ինչո՞ւ համար Յիսուս այս տեսիլը ցուցուց աշակերտաց .

Յիսուս այս տեսիլն անոր համար ցուցուց որ աշակերտք տեսնան իւր Աստուածային փառքը, և հաւատալով որ Նա է ճշմարիտ Աստուծոյ որդին, ըստ այնմ վկայեն իրեն համար յետ Յարութեանն :

7. Այս այլակերպութեան յիշատակը կը կատարէ Հայոց եկեղեցին .

Այլակերպութեան յիշատակը կը կատարէ Հայոց եկեղեցին Վարդապատնեւումբ :

Գ Ա Ս Ա Պ .

ՔՇՆԱՄԻՔ ՅԻՍՈՒՍԻ

1. Հրէայք Յիսուսի Աստուածութեանը հաւատացին .

Հրէից շատերը Յիսուսի խրատներովն ու հրաշքներով լուսաւորուած հաւատացին, իսկ շատերն ալ չհաւատացին և թշնամի ալ եղան :

2. Որո՞նք էին այդ թշնամիները .

Թշնամի էին Քահանայապետք հրէից և ծերք, դպիրք, փարիսեցիք, Հերովդիսանոսք և այլք :

3. Դպիրներն ի՞նչ մարդիկ էին .

Դպիր կը կոչուէին Հրէից վարդապետներն ու դիտուէներն, որ հրէական կրօնը կը սորվեցնէին .

4. Փարիսեցիներն ի՞նչ մարդիկ էին .

Փարիսեցիները կեզծաւոր, ազահ և խաբեբայ մարդիկ էին, որ ինքզինքնին ամենէն արգար կը ձեւացնէին :

5. Ասոնց համար ի՞նչ ըսաւ Յիսուս .

Փարիսեցւոց համար ըսաւ Յիսուս, «Չամենայն զոր ասեն ձեզ, արասջիք, բայց ըստ դործոց նոցա մի՛ առնէք, զի ասեն և ո՛չ առնեն» :

6. Հերովդիանոսներն ո՞վ էին .

Հերովդիանոս կոչուածները Հերովդէսի կողմանէ դրուած պաշտօնեաներ էին, որ հարկերը կը հաւաքէին :

7. Ասոնք ամենքն ինչո՞ւ Քրիստոսի թշնամի եղան .

Ասոնք ամենքը թշնամի եղան, վասն զի Յիսուս անոնց կոյր նախանձը, մուլութիւնն ու կեղծաւորութիւնը միշտ երեսնին կը զարնէր :

8. Ուրեմն այդ թշնամիք ի՞նչ կը խորհէին Յիսուսի վրայ .

Կը խորհէին որ զանի մեռցնեն, բայց հնարք մը կը փնտռէին :

9. Ի՞նչ հնարք գտան .

Անգամ մը ուղերով որ Յիսուսը կառավարութեան դէմ ապստամբ ցոյց տան, հարցուցին Յիսուսի թէ «վարդապետ, կայսեր հարկ տալ պէ՞տք է թէ ո՛չ?»

10. Յիսուս անոնց ի՞նչ պատասխան տուաւ առ այդ .

Յիսուս դահեկան մը բերել տալով անոնց հարցուց թէ անոր վրայի պատկերը որո՞ւն է, երբ անոնք «կայսերն» ըսին, ուրեմն տարէք ըսաւ Յիսուս կայսերինը կայսեր տուէք, Աստուծոյնն ալ՝ Աստուծոյ» : Ասոր վրայ փախեցիք պապանձեցան :

Գ Ա Ս Լ Գ .

ԳԱԼՈՒՍՏ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԵՐՈՒՍԱԼԷՄ

1. Յիսուս Ջատկի տօնին մօտ ո՛ւր կը գտնուէր .
Յիսուս Ջատկի տօնին մօտ Եփրատիմ քաղաքը կը կենար աշակերտներով մեկտեղ . զի Հրէսոց Երուսաղիմաց մէջ կուղէին զՆա քարկոծել :



2. Յիսուս Եփրատին ո՛ւր գնաց .
Ջատկի տօնէն վեց օր յառաջ Յիսուս Բեթանիա գիւղը իւր բարեկամին՝ Ղաղարու տունն եկաւ :

3. Հոն ինչ պատահեցաւ .
Հոն՝ Ղաղարու քոյրը լիար մի պառական իւղ բերելով Յիսուսի ոտքել օծեց և մազերսիւր սրբեց :

4. Յիսուս այդ օժման համար ինչ ըսաւ :

Յիսուս ասկէ շատ գոհ եղաւ և ըսաւ «Այդ օժումն իմ թաղումն կը նշանակէ . ուստի այդ կնոջ յիշատակը բոլոր աշխարհ պիտի քարոզուի» :

5. Յիսուս Բեթանիոյ մէջ ո՞րչափ կեցաւ .

Հետեւեալ օրը Յիսուս իշոյ և յաւանակի վրայ նստած մեծ հանդիսիւ Երուսաղէմի տաճարը մտաւ :



6. Ինչպէս եղաւ այդ հանդէսը .

Երբ ժողովուրդը լսեց որ Յիսուս կուգայ, արմաւենեոյ և ձիթենեոյ ճիւղի ձեռքերնին առած զանի դիմաւորցին . և մեծ ու պզտիկ սկսան երգել, լվսաննա , օրհնեալ որ դաս յանունն առն» :

7. Ովսաննա ի՞նչ ըսել է.

Ովսաննա՝ Եբրայեցւոց բառ է և ո՛վ Յիսուս, մեզ փրկէ կը նշանակէ :

8. Յիսուսի թշնամիք այս տեսնելով ի՞նչ ըրին.

Յիսուսի թշնամիք բարկացան ասոր վրայ, և ուզեցին ժողովուրդը լռեցնել. բայց Յիսուս ըսաւ, «Թէ որ ատոնք լռեն, քարերը պիտի պոռան», :

9. Տաճարին մէջ ի՞նչ ըրաւ Յիսուս.

Տեսնելով Յիսուս որ շատերն առուտուր կ'ընեն Տաճարին մէջ, զամենքն ալ փնտեց խարազանաւ ըսելով, «Իմ տունս աղօթարան է, բայց դուք գողերու բնակավայր ըրէր էք», և իրիկուան դէմ նորէն Բեթանիա դարձաւ :

10. Հետեւեալ օրն ի՞նչ տեղի ունեցաւ.

Երբ Յիսուս Բեթանիայէն աշակերաներովը մէկտեղ վերստին կուգար, ճամբան անօթեցաւ, և թզենւոյ մը մօտենալով երբ վրան պտուղ չգտաւ, անիծեց ծառն, որ իսկոյն չորցաւ :

11. Առ այդ աշակերտներն Յիսուսի բան մ'ըսին.

Աշակերտք տեսնելով սյս սքանչելիքը զարմացան, և Յիսուս ըսաւ. «Եթէ հաւատք ունենաք, ամէն բա կրնաք ընել, նաեւ աղօթքով ի՞նչ ոխնդրէք, կ'առնուք» :

Գ Ա Ս Լ Ե .

ՄԱՏՆՈՒՅԻՒՆ ՅՒՍՈՒՍԻ

1. Յիսուս գիտէ՞ր որ զինքը պիտի սպաննեն .

Գիտէր Յիսուս որ զինք պիտի ըսպաննեն, ուստի ըսաւ աշակերտներուն «Գիտցած եզիք որ երկու օրէն Զատիկ կ'ըլլայ, և ես պիտի մատնուիմ անօրինաց ձեռքը խաչուելու համար» :

2. Յիսուս որո՞ւ ձեռքով մատնուեցաւ .

Յիսուս մատնուեցաւ Յուդայ Իսկարիովտացւոյ ձեռքով որ Յիսուսի երկոտասան առաքելոց մին էր :

3. Ինչու համար Յուդայ այդ անօրէնութիւնն ըրաւ .

Այս Յուդայ՝ ադահ և արծաթասէր մէկն էր :

4. Ուրեմն անոր ստակ տալու խօսք տուող մը եղա՞ծ էր .

Հրէից քահանայապետները երեւորուն արծաթ տալ խոստացեր էին Յուդայի, թէ որ իր Տէրը մատնէր :

5. Յուդային ատանկ չար դիտաւորութիւն մ'ունենալը Յիսուս առաջուց գիտէ՞ր :

Յիսուս այս բանն առաջուց գիտէր, և յայտնեց զայն բաղարջակերաց տօ-

նին առջի իրիկունը որ էր Աւագ հինդ-
շաբթի :

6. Ինչպէս .

Երբ հրէական սովորութեան հա-
մեմատ Յիսուս Զատիական դառը ու-
տելու համար իր աշակերտաց հետ սե-
ղան նստած էր , աշակերտներուն ըսաւ .
“Չեզմէ մէկը զիս պիտի մատնէ ,” :



7. Այդ խօսքով ինչպէս հասկցուեցաւ սր Յու-
դան է .

Այս խօսքին վրայ երբ աշակերտ-
ներն հարցուցին ո՛վ ըլլալը , Յիսուս
ըսաւ . “Որով որ պատառը թաթխեմ
տամ , ան է ,” . և իսկոյն Յուդայի
տուաւ :

8. Յուդայ ան ատեն ի՞նչ ըրաւ .

Յուդայ պատառն առնելուն պէս
գիշերանց դուրս ելնելով Քահանայա-
պետներուն գնաց, իր միտքը դրածը
կատարելու համար :

Գ Ա Ս Լ Զ .

ՈՏՆԱԼՈՒԱՅ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

1. Ընթրեաց ժամանակ ի՞նչ տեղի ունեցաւ .

Ընթրեաց ժամանակ կատարուե՞



ցաւ նախ Ոսնալուայն և ապա սուրբ
Հաղորդութեան խորհուրդը :

2. Ի՞նչպէս եղաւ Ոսնալուայն .

Ընթրիքէն քիչ մը յառաջ Յիսուս
առջեւը ղենջակ մը կապած՝ նստաւ .

և ջրով լեցուն կոնքի մը մէջ իր աշա-
կերտաց ոտքերը լուաց :

3. Ինչո՞ւ համար .

Ասիկա ըրաւ խոնարհութեան օրի-
նակ տալու համար , և ըսաւ « Ինչպէս
ես ձեզի ըրի, դուք ալ իրարու ըրէք » :

4. Յիսուս Ս. Հաղորդութեան խորհուրդը ինչ-
պէս կատարեց .

Ոտնարուայէն ետքը Յիսուս դարձ-
եալ սեղան բազմելով հացն առաւ ,
օրհնեց և տուաւ աշակերտներուն ըսե-
լով, « Առէք կերէք, այս է մարմին իմ » .
յետոյ բաժակն օրհնելով տուաւ և ը-
սաւ . « Արբէք ի սմանէ, այս է արիւն իմ » :

5. Ուրիշ բան մ'ալ պատուիրեց աշակերտներուն .

Պատուիրեց Յիսուս միշտ կատարել
այս Սուրբ խորհուրդը՝ (որ է Ս. Պա-
տարագ) զինքն յիշելու և իրեն հետ
հաղորդակից ըլլալու համար :

6. Յիսուս անկէ ետքը ինչ ըրաւ .

Յետոյ Յիսուս աշակերտներուն մի-
թարական խօսքեր խօսեցաւ . և ապա
անոնց հետ երուսազիմայ մօտ Գեթսե-
մանի պարտէզը մտաւ սղօթելու :

7. Այդ միջոցին ինչ պատահեցաւ .

Հոն երբ Յիսուս կ'ազօթէր, ահա Յուդայ՝ քահանայապետներուն և զինուորներուն առջին ինկած Յիսուսի քովն եկաւ, համբուրեց զՆա :

8. Ինչո՞ւ համար .

Վասն զի Յուդայ առաջուց իր հետ



եղողներուն ըսած էր թէ «Որն որ ես համբուրեմ, նա է Յիսուս», ուստի զինուորք իսկոյն զԱնի բռներով կապեցին :

9. Յիսուս բան մը չըսա՞ւ Յուդայի .

Յիսուս սյսչափ միայն ըսաւ «Յուդայ, համբուրելո՞վ կը մատնես զիս» :

10. Այդ խօսքն ազդեցութիւն չըրա՞ւ Յուդայի .
Թէպէտ Յուդայ հասկցաւ իր անօ

րէնութիւնը, բայց զզջալու տեղ յուսահատելով գնաց ինքզինքը կախեց, և հոգւով մարմնով կորսուեցաւ :

11. Յուդայի առած 30 արծաթն ի՞նչ եղաւ .

Յուդայ անձնասպան ըլլալէ յառաջ՝ առած արծաթը քահանայապետներուն յանձնեց ըսելով . «Ես մեզք գործեցի որ արդարին արիւնը մատնեցի» :

12. Քահանայապետք այդ արծաթը առին .

Քահանայապետք թէպէտ առին արծաթը, բայց արեան դին ըլլալուն համար տաճարին դանձանակը գնել արժան չսեպեցին :

13. Հապա ի՞նչ ըրին .

Ան արծաթով բրուտի ագարակ մը գնեցին և կոչեցին «Ակեղդամայ», որ ըսել է ագարակ տրեան, և օտարականաց մեռելները հոն կը թաղէին :

Գ Ա Ս Լ Է .

ՈՒՐԱՅՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԻ

1. Երբ Յիսուս բռնուեցաւ զինուորներէն, աչա կերտք ի՞նչ ըրին .

Երբ Յիսուս բռնուեցաւ, աչակերտք ուղեցին թշնամեաց հետ կռուիլ . Պետ-

րոս ալ դանակով Քահանայապետին ծառային ականջը կտրեց :

2. Յիսուս կ'ուզէր որ առաքեալք այդպէս վարուին .

Յիսուս չէր ուզեր որ այդպէս վարուին , ուստի խակոյն ծառային ականջը քժչկեց և ըսաւ . «Սուրերը տեղը դրէք, վասն զի սուր առնողը սրով պիտի կշնայ» :



3. Յիսուսը ո՛ւր տարին .

Զինուորք՝ Յիսուսը առաջ Աննա քահանայապետին և անպա Նայիափայ քահանայապետին տունը տարին որ դատուի . աշակերտներն ալ փախանցրուեցան :

4. Յիսուսի քով իրեններէն մարդ չմնաց .

Միայն Պետրոս և Յովհաննէս առաքեալք մնացին, որ Յիսուսի ետեւէն մինչեւ քահանայապետին տունը մտան :

5. Հոն ինչ դէպք պատահեցաւ .

Հոն Յիսուսի առաջուց ըրած մարգարէութիւնը կատարուեցաւ, որով ըսած էր թէ Պետրոս այն դիշեր հաւախօսէ սուաջ զինք երեք անգամ պիտի ուրանար :

6. Երբ ըրած էր այդ մարգարէութիւնը .

Այս մարգարէութիւնը ըրաւ Յիսուս, երբ Գեթսեմանի պարտիզին մէջ Պետրոս պնդելով կ'ըսէր Յիսուսի թէ «Մեռնելա գիտնամ, քենէ չպիտի զատուիմ» :

7. Պետրոսի այդ ուրացումը ինչպէս տեղի ունեցաւ .

Երբ երեք անգամ զանազան մարդիկ եկան Պետրոսի ըսին թէ գու ալ Յիսուսի աշակերտներէն ես, Պետրոս վախնալով նղովեց և ուրացաւ զՅիսուս :

8. Պետրոս զգաց որ այդ ըրածը մեղք էր .

Երբ երրորդ անգամուն Յիսուսի ըսածին պէս հաւը խօսեցաւ, Պետրոս Յիսուսի խօսքը յիշեց, և դուրս ելնելով դառն արտասուք թափեց :

Գ Ա Ս Ա Ը .

ԶԱՐԶԱՐԱՆՔ ՅԻՍՈՒՍԻ

1. Կայիափայի տունը Հրէայք ինչ ըրին Յիսուսի .
Կոյիափայի տան մէջ Հրէայք մինչ
չեւ առաւօտ Յիսուսի երեսը թքնելով,
ծաղրելով, ապտակ զարնելով չարչարե-
ցին զնա :



2. Առաւօտուն Յիսուսը ո՛ր տարին .

Առաւօտուն Պոնտացի Պիղատոս
անուն դատաւորին տարին զնա , որ
մեռցնելու հրաման առնուն անկէ :

3. Պիղատոս ինչ ազգէ էր .

Պիղատոս Հռովմայեցի էր և Հռով-
մայեցւոց կողմէն Հրէից երկրին կու-
սակալ դրուած էր :

4. Ինչո՞ւ համար Պիղատոսէն հրաման ինդրեցին .
Վասն զի Հրէայք Հռովմայեցւոց
հպատակ ըլլալով իրենք իրենց մահ-
ուան վճիռ տալու արտօնութիւն չու-
նէին :

5. Հրէայք ինչ յանցանք գրած էին Յիսուսի
վրայ .

Հրէայք կ'ըսէին Յիսուսի համար



Թէ այս մարգը՝ ըստ մեր օրինաց մահապարտ է . որովհետեւ ինքզինք Հրէից թագաւոր կոչելով ժողովուրդը կը գրգռէ :

6. Պիղատոս ինչ ըրաւ .

Պիղատոս Յիսուսը քննելով հասկըցաւ որ Հրէայք նախանձու համար մտտնած էին զինքը «Ես աս մարդուն

վրայ մահու արժանի յանցանք մի չեմ տեսներ, ըսաւ ։

7. Հրէայք այս խօսքով գոհ եղան .

Հրէայք գոհ չեղան ասով, այլ կատիպէին որ մահուան վճիռ տայ . Պիղատոս ալ Յիսուսի Գալիլիացի ըլլալը լսելով զանի Հերովդէսին⁽¹⁾ զրկեց, որ նա ալ անդամ մը դատէ Յիսուսը ։

8. Հերովդէս ինչ ըրաւ .

Հերովդէս արդէն Յիսուսի համբաւը լսած ըլլալով, երբ տեսաւ զնա, ուրախացաւ և ուզեց որ Յիսուս իր առջին հրաշք գործէ ։

9. Յիսուս անոր կամքը կատարեց .

Յիսուս ոչ միայն անոր կամքը չ'կատարեց, այլ և հարցումներուն ալ պատասխան չտուաւ ։

10. Ետքը ինչ եղաւ .

Հերովդէս Յիսուսի լուսթեան վրայ բարկանալով, ծագրելու համար վրան ձերմակ լաթ մը ձգեց և նորէն Պիղատոսի զրկեց ։

11. Պիղատոս յայնժամ ինչպէս վարուեցաւ Յիսուսի հետ .

(1) Այս այն Հերովդէսն է որ Գալիլիայի չորրորդապետն էր և որ զՅովհաննէս Մկրտիչ գլխատել տուաւ ։

Պիղատոս յայնժամ ուզեց Յիսուսը արձակել. բայց Հրէայք խնդրեցին որ մարդասպան Բարաբբան թող տայ և Յիսուսը խաչէ :

12. Պիղատոս հաւանեցաւ այդ խօսքին .

Նա չհաւանեցաւ, այլ բազմու-
թեան առջեւ ձեռքերը լուաց ըսելով .
«Նա այդ արդար մարդուն արիւնէն
քաւեալ եմ» :

13. Հրէաները ինչ պատասխան տուին .

Հրէայք պատասխանեցին թէ «Ա-
տոր արիւնը մեր վրայ և մեր զաւակաց
վրայ թող ըլլայ» :

14. Ուրեմն Պիղատոս հրաման տուաւ Յիսուսը
խաչելու .

Վերջապէս Պիղատոս ուզելով ամ-
բոխին սիրտը հաճեցնել, Յիսուսը Հը-
րէից ձեռքը տուաւ որ ընեն անոր ինչ
որ կ'ուզեն :

Գ Ա Ս Լ Բ .

ԽԱԶԵԼՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ

1. Հրէայք ինչ ըրին Յիսուսի .

Հրէայք Յիսուսը հոն զինուորնե-
րուն յանձնեցին . որոնք անարդաբար

անոր կարմիր քղամիտ (վերարկու) հաղ-
ցուցին, դուռիս փշէ պսակ դրին, ձեռքն
ալ եղէդ մը տալով կը ծագրէին ու կը-
սէին, «Ողջ լեր հրէից թագաւոր» ։

2. Ուրիշ ինչ անօրէնութիւն գործեցին .

Ահագին խոսչ մը Յիսուսի ուսը տա-
լով ուղեցին որ մինչեւ Գողգոթա լեռը
տանի ։



3. Գողգոթա ինչպիսի տեղ էր .

Այս լեռը քաղաքէն դուրս տեղ
մ'էր, ուր սովորաբար մահապարտները
տանելով կ'սպաննէին ։

4. Յիսուս կրցա՛ւ խաչափայտը մինչեւ Գողգոթա
տանիլ .

Հրէայք ճամբան Սիմօն Կիւրենացի
անուն մարդու մը հանդիպելով զանի

պահակ բռնեցին որ խաչը տանելու
օգնէ :

5. Ի՞նչ տեղի ունեցաւ ճամբուն վրայ .

Ճամբուն վրայ խել մը կիններ գլխա-
լով կուլային Յիսուսի վրայ . բայց նա
ըսաւ անոնց . «Իմ վրայ մի լաք, այլ
ձեր ու զաւակներուդ վրայ լացէք» :



6. Գողգոթայի վրայ զինուորներն ի՞նչ ըրին .

Զինուորք լեղիով և գմուսով խառ-
նուած քացախ տուին Յիսուսի, բայց
նա չուզեց խմել :

7. Յետոյ ի՞նչ եղաւ .

Այն օր՝ որ էր Աւագ Ուրբաթ, յե-
րորդ ժամուն Յիսուսը խաչեցին ուրիշ
երկու մարդոց մէջտեղ :

8. Ատոնք ի՞նչ մարդիկ էին .

Ատոնք երկուքն ալ չարադործ աւազակներ էին, բայց անոնցմէ մին՝ աջակողմեանը՝ արքայութեան արժանացաւ :

9. Ի՞նչպէս արժանացաւ .

Վասն զի երբ ձախակողմեան աւազակը կը նախատէր ղՅիսուս, աջակողմեանը յանդիմանեց զանի, և ինք դարձի գալով հաւասուց Յիսուսի Աստուածութեանը :

10. Ի՞նչպէս յայտնեց նա իւր հաւատքը .

Նա Յիսուսի ըսաւ, «Յիշեա զիս, Տէ՛ր, յորժամ դոյցես արքայութեամբքով», Յիսուս ալ ըսաւ անոր. «Այսօր ընդ իս իցես ի դրախտին» :

11. Յիսուսի հանդերձները ի՞նչ ըրին .

Ձինուորք Յիսուսի հանդերձները չորս կտոր պատուելով մէջերնին բաժնեցին :

12. Պատմուճանն ալ պատուեցի՞ն .

Պատմուճանը առանց կարի ըլլալուն համար անոր վրայ վիճակ ձգեցին :

13. Յիսուսի խաչին վրայ ի՞նչ գրուած էր .

Յիսուսի խաչին վրայ Պիղատոս

գրել տուած էր, Եբրայեցերէն, Դաղմատերէն (Լատիներէն) և Յունարէն լեզուաւ սյսպէս, «Յիսուս Նազովրեցի Թաղաւոր Հրէից» :

14. Յիսուս խաչին վրայ եղած ատեն ի՞նչ բաներ պատահեցան .

Յիսուսի թշնամիք խաչին դիմացը գալով կը նախատէին և կը ծաղրէին զնա, բայց ինքն Հօր Աստուծմէ անոնց համար թողութիւն կը խնդրէր :

15. Ուրիշ .

Երբ Յիսուս ծարաւի եմ ըսաւ, զինուորք ջրոյ տեղ լեղախառն քացախի մէջ թաթխուած սպունդ (սխնկէր) մը անոր բերանը առին :

16. Որո՞նք կային Յիսուսի խաչին մօտ .

Յիսուսի խաչին մօտ կային Յիսուսի մայրը Ս. Մարիամ Աստուածածին, Մարիամ Կղէովպայ, Յովհաննէս աւետարանիչ և սյւլք :

17. Ի՞նչ յանձնարարութիւն ըրաւ Յիսուս խաչին վրայէն .

Յիսուս խաչին վրայէն իւր մօրը Ս. Աստուածամօր՝ «Կին դու, ահա որդիք», ըսաւ, Յովհաննէսը ակնարկելով Յովհաննէսին ալ՝ «Ահա մայր քո ըսաւ, Աստուածամայրը ակնարկելով

Գ Ա Ս Խ.

ՄԱՀ ԵՒ ՔԱՂՈՒՄՆ ՅՒՍՈՒՄԻ

1. Յիսուս ինչպէս աւանդեց իւր հողին .

**Յիսուս խաչին վրայ բարձր ձայնիւ
գոչեց ըսելով «Հայր, ի ձեռս քո աւան-
դեմ ղհողի իմ» :**

2. Ի՞նչ սքանչելիք եղան Յիսուսի մահուան ատեն .

Յիսուսի մահուան ատեն խաւար



**պատեց բոլոր երկրի վրայ . արեգակը
խաւարեցաւ արտասովոր⁽¹⁾ կերպիւ .
Տաճարին վարագոյլը մէջտեղէն ինքնին
պատուեցաւ :**

(1) Այս խաւարումն արտասովոր կ'ըսուի, վասն զի
այն ատեն լուսնի լրումն ըլլալով, բնական կարգաւ
արեգական խաւարումն չէր կրնար ըլլալ :

3. Ուրիշ .

Գետնաշարժ եղաւ . ապառաժները
ճեղքուեցան, դերեզմանները բացուե-
ցան, բազում արդար մարդիկ յարու-
թիւն առնելով շատերուն երեւեցան :

4. Ուրիշ ի՞նչ տեղի ունեցաւ .

Զինուորներէն մին Յիսուսի կողը
ծակեց նիզակով , ուրկէ արիւն և ջուր
վաղեց :



5. Յիսուսի մարմինը ո՞վ վար առաւ խաչէն .

Յովսէփ Արեմաթացին ու Նիկողի-
մոս Աւագ ուրբաթ երեկոյ Յիսուսի
մարմինը խաչէն վար առին :

6. Ո՞վ էին այդ մարդիկ .

Ասոնք Հրէից իշխաններ և Յիսու-
սի ծածուկ աշակերտներ էին :

7. Յիսուսի մարմինն ո՞ւր թաղեցին .

Յիսուսի մարմինը անուշահոտ իւղով օծեցին և մաքուր կտաւի մէջ պատելով Գողգոթայի մօտ պարտէզը տարին ու վիմափոր դերեզմանի մէջ դրին, որուն մէջ մարդ չէր գրուած :

8. Հրէից անզգամութիւնը այսքանով լմնցա՞ւ .

Հրէայք դերեզմանը կնքելէ յետոյ պահապան զինուորաց հսկողութեան տակ դրին զայն :

9. Ինչո՞ւ համար .

Վասն զի կը վախնային որ Առաքեալք Յիսուսի մարմինը կը դողնան և ետքը լուր կը հանեն թէ յարութիւն առեր է :

Պ Ա Ս Խ Ա .

ՀՐԱՇԱՓԱՌ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ

1. Քրիստոս ե՞րբ յարութիւն առաւ .

Քրիստոս թաղման երրորդ օրը այսինքն կիրակի առտու լուսնալու մօտ յարութիւն առաւ :

2. Գերեզմանին պահապաններն ի՞նչ եզան .

Գերեզմանին պահապանները վախաւորան, սարսափեցան ու մեռելի պէս լետին ինկան :

3. Ինչէ՞ն այդպէս եղան պահապանք .

Վասն զի զիրենք վախցուց այն հրեշտակին ահաւորութիւնը՝ որ յանկարծ փայլակի պէս իջնելով դերեզմանին դրան քարը գլորեց ու վրան նրատաւ ։

4. Քրիստոսի յարութիւնն ի՞նչպէս իմացուեցաւ .

Նիրակի առաւօտ կանուխ երբ իւ-



զարեր կանայք Յիսուսի մարմինն օծելու եկան, գերեզմանը բացուած տեսան և մարմինն ալ հոն չգտան ։

5. Ատով ի՞նչպէս հասկցան Յիսուսի յարութիւն առած ըլլալը .

Յանկարծ երկու լուսափայլ հրեշտակք անոնց երեւելով ըսին «Կենդանին մեռելոց հետ ի՞նչ կը փնտռէ, հոս չէ, այլ յարեաւ » ։

6. Ուրիշ ինչ եղաւ .

Երբ Մարիամ Մաղդաղենացի կու-
լար, Յիսուս պարտիզպանի կերպարան-
քով անոր երեւելով պատուիրեց որ
երթայ աշակերտներուն աւետէ իւր
յարուժիւնը :

7. Պահպան զինուորք յետոյ չգացին այս դէպքն
իրենց մտնելուն պատմելու .

Պահպաններն անկից անմիջապէս
գացին Քահանայապետներուն և Հրէից
երեւելիներուն պատմեցին այս եղածը :

8. Անոնք ինչ ըրին .

Քահանայապետք զինուորներուն
չատ ստակ տուին խրատելով որ սուտ
հանեն յարուժիւնը և ըսեն թէ աշա-
կերտք դիշերանց մարմինը գողցան,
երբ իրենք կը քնանային :

9. Առաքելք իմացան Քրիստոսի յարութիւնը .

Մարիամ Մաղթաղենացի և ոյլք
իսկոյն Առաքելոց աւետեցին և Յի-
սուսի պատուիրածն անոնց իմացուցին :

10. Յիսուս անոնց ինչ պատուիրած էր .

Յիսուս պատուիրած էր որ Առաք-
ելք շուտով Գալիլիա երթան զինքը
տեսնելու, անոնք ալ գացին և հոն

**տեսներով ուրախացան և անոր երկր-
պագեցին :**

11. Ուրիշ անգամներ ալ Յիսուս երեւցաւ իր
աշակերտներուն .

**Յիսուս մինչեւ քառասուն օր տանն
և մէկ անգամ երեւցաւ իր աշակեր-
տաց , իր ձեռքերուն և ոտքերուն վեր-
քերը անոնց ցուցուց որ հաւատան :**



12. Միիւր անոնց մէջ հաւատացող կար .

**Առաքեալներէն մին՝ Թովմաս՝ ա-
ռաջին անգամ ընկերներուն հետ չգրտ-
նուելուն համար կասկած յայտնած էր :**

13. Յետոյ Թովմաս հաւատաց .

**Թովմաս երբ շոշափեց Յիսուսի
վերքերն , հաւատաց . բայց Յիսուս
ըսաւ «Երանի՛ր անոնց որ զիս չտեսած
պիտի հաւատան ,» :**

Գ Ա Ս Ե Ք .

ՀԱՄԲԱՐՉՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՍԻ

1. Յիսուս քառասուն օրէն ետքը ինչ ըրաւ .
Յիսուս իւր յարութեան քառաս



**ներորդ օրը աշակերտներն առած Ձի-
թենեաց լեռը ելաւ, իր վերջին պատ-
ուէրներն և օրհնութիւնը անոնց տա-
լու համար :**

2. Ի՞նչ էին Յիսուսի պատուէրները.

Պատուիրեց Յիսուս իր առաքելոց որ բոլոր աշխարհ պտրտին, քարոզեն Հեթանոսաց, ու մկրտեն զանոնք յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ :

3. Ուրիշ ի՞նչ պատուիրեց Յիսուս.

Պատուիրեց նաեւ Յիսուս իւր առաքելոց որ Երուսաղէմէն չհեռանան մինչեւ Հոգւոյն սրբոյ դալուստը, զոր խոստացաւ անոնց զրկել :

4. Ետքը ի՞նչ եղաւ .

Ետքը իր աշակերտներն օրհնելով երկինք համբարձաւ :

5. Աշակերտներն այդ տեսնելով ի՞նչ ըրին .

Աշակերտք երբ Յիսուսի ետեւէն ապշած դէպ ի երկինք կը նայէին, նոյն միջոցին մտորու կերպարանքով երկու հրեշտակներ երեւեցան :

6. Այդ հրեշտակներ ի՞նչ ըսին աշակերտաց .

Հրեշտակներն ըսին թէ, « Ո՛վ Գալիլիացիք, ի՞նչ զարմացած երկինք կը նայիք, այս Յիսուս՝ որ համբարձաւ գարձեալ օր մը պիտի գայ փառօք՝ զօրութեամբ » :

Գ Ա Ս Խ Գ.

ԳԱԼՈՒՍՏ ՇՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ

1. Քրիստոսի առաքեալք Ձիթենեաց լեռնէն ո՛ւր գացին .

Առաքեալք անմիջապէս Երուսաղէմ դարձան, և Ս. Սիօն վերնատան մէջ ժողվուած կ'սպասէին Հոգւոյն սրբոյ գալստեան :

2. Հոն առաքելոց հետ ուրիշներ ալ կային .

Հոն կային նաեւ Ս. Մարիամ Աստուածամայրն, Յակոբ Տեառն եղբայր, աշակերտք և ուրիշ հաւատացեալք, ընդ ամէնն հարիւր քսանի չափ :

3. Վերնատան մէջ ինչ նշանաւոր բաներ տեղի ունեցան .

Պետրոս առաքեալ զգացուց որ մատնիչ Յուդայի տեղ պէտք է ուրիշ մ'ընտրել առաքելութեան. ուստի երկու ընտրելեաց վրայ վիճակ ձգեցին :

4. Ո՛վ էին այդ ընտրելիներ .

Այս ընտրելիք էին Յուստոս և Դաստիսիա, երկու պարկեշտ և բաւեպաշտ անձինք :

5. Ինչպէս կատարուեցաւ ընտրութիւնը .

Առաքեալք ամենքնին միատեղ

ազօթքի կենարով Հողւոյն սրբոյ կոչումն ըրին սոյն երկուքէն մին ընտրելու, յետոյ վիճակաւ Մատաթիա ընտրուելով լրացաւ առաքելոց թիւը :

6. Երբ եղաւ Հողւոյն սրբոյ գալուստը .

Հողւոյն սրբոյ դալուստն եղաւ Քրիստոսի համբարձմանէն տասն օր ետքը՝ Կիրակի օր :



7. Ինչպէս եղաւ .

Երբ վերնատան մէջ եզոզները միաբան կ'ազօթէին, յանկարծ սաստիկ հովի նման ձայն մ'ելաւ, և նոյն հետայն Հողին սուրբ հրեղէն լեզուօք անոնց իւրաքանչիւրին վրայ իջաւ :

8. Այս հրաշալի տեսեան հետեւանքն ինչ եղաւ .

Ամէնքն ալ Հողւոյն սրբոյ շնորհօք

և իմաստութեամբ լցուելով սկսան
զանազան լեզուներ խօսիլ, անանկ որ
ամէն ոք զանոնք տեսնելով ապշած կը
զարմանար :

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Գ Ա Ս ԽԳ.

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՅ

1. Առաքեալք զՀոգին սուրբ ընդունելէ յետոյ
Բնչ ըրին .

Ա. Առաքեալք Հոգւով սրբով լըց-
ուած՝ Քրիստոնէական հաւատոյ հան-
գանակը սահմանեցին :

Բ. Սուրբ Աւետարանը քարոզեցին :

Գ. Բոլոր աշխարհ պտրտելով հա-
ւատացեալները մկրտեցին, և Քրիստո-
սի եկեղեցին հաստատեցին իր Ս. Խոր-
հուրդներով :

2. Քրիստոնէական հաւատոյ հանգանակը ո՞րն է .

Քրիստոնէական հաւատոյ հանգա-
գանակը « Հաւատամք »ն է, որ Քրիս-

տոնէական եկեղեցւոյ հաւատալիքներն
իր մէջ կը պարունակէ համառօտիւ ։

3. Ինչո՞ւ համար առաքեալք սահմանեցին զայն .

Վասն ՚զի պէտք է որ բոլոր Քրիստոնեայք անխտիր զանի գոց գիտնան
իբրեւ կանոն հաւատոյ ։

4. Կրնա՞ս ըսել ինձ այդ « Հաւատամք » ն .

Հաւատամք ի մի Աստուած ի Հայրըն, ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի երեւելեաց և աներեւութից ։ Եւ ի մի տէր Յիսուս Քրիստոս՝ յորգին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ հօրէ միածին՝ այսինքն յէութենէ հօր ։

Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ՝ և ո՛չ արարած ։ Նոյն ինքն ի բնութենէ հօր, որով ամենայն ինչ եզել յերկինս և ի վերայ երկրի երեւելիք և աներեւոյթք . որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն հոգւովն սրբով ։ Որով էառ մարմին, հոգի և

միտք և զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ո՛չ դոյ վախճան:

Հաւատամք և ի սուրբ Հոգին՝ յանեղն և ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս, և ի մարգարէս և յաւետարանս, որ էջն ի Յորդանան, քարոզեաց զԱռաքեալն և բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք և ի միմիայն յընդհանրական և յառաքելական եկեղեցի, ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քառութիւն և ի թողութիւն մեղաց, ի յարութիւն մեռելոց, ի գատաստանն յաւիտենից Հոգւոց և մարմնոց, յաքայութիւնն երկնից և ի կեանսն յաւիտենականս:

Իսկ որք ասենն՝ էր երբեմն յորժամ ո՛չ էր Որդին, կամ էր երբեմն յորժամ ո՛չ էր սուրբ Հոգին, կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էու-

Թե՛ն է ասե՛ն լինել զՈրդին Աստուծոյ
և կամ զսուրբ Հոգին. և Թէ փոփոխե-
լիք են կամ այլայլելիք, զայնպիսիան
նզովէ Կաթողիկէ և Առաքելական
սուրբ Եկեղեցի :

Իսկ մեք փառաւորեսցուք որ յա-
ռաջ քան զյաւիտեանս երկիրպագա-
նելով սրբոյ Երրորդութեանն և միոյ
Աստուածութեանն Հօր և Որդւոյ և
Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յա-
ւիտեանս յաւիտենից ամէն :

Գ Ա Ս ԽԵ.

ՀԱՆԳԱՆԱԿ ԵՒ Ս. ԱԻԵՏԱՐԱՆ

1. Հանգանակով ի՞նչ բաներու հաւատացած
կ'ըլանք :

Հանգանակով կը հաւատանք,

Ա. Թէ մի է Աստուած :

Բ. Թէ մի Աստուած երեք անձն
ունի, Հայր, Որդի և Հոգի սուրբ :

Գ. Թէ Աստուած՝ արարիչն է երկ-
նի և երկրի, և կը խնամէ զանոնք իւր
ողորմութեամբ :

Դ. Թէ Որդին Աստուած՝ որ է Յիսուս Քրիստոս, մարմին առնելով աշխարհ եկած է մարգոյ փրկութեան համար :

Ե. Թէ Հոգին սուրբ իւր շնորհօք և իմաստութեամբ լցուցած է Մարգարէներն և Առաքեալները :

Զ. Թէ Հոգին սուրբ իջաւ Յորգանան և քարոզեց Քրիստոսի աստուածութիւնը :

Է. Թէ Քրիստոս հաստատած է իւր Ս. Եկեղեցին և անոր Ս. խորհուրդները :

Ը. Թէ ի վախճանի աշխարհիս՝ բոլոր մեռեալ մարդիկ պիտի կենդանանան :

Թ. Թէ Քրիստոս նորէն պիտի դայ յաշխարհ բոլոր մարդկային ազգը դատելու համար :

2. Այս «Հաւատամք»ն ամբողջ իր նոյնութեամբ Առաքեալք օրինադրեցին .

«Հաւատամք»ին էական մասերն արդէն Առաքեալք սահմանեցին, բայց յետոյ Նիկիոյ Ս. Ժողովոյն մէջ հայ-

րապետք անոր իմաստները տեղ տեղ բայատրեցին :

3. Ո՞րչափ Հայրապետներ ժողովուած էին Նիկիոյ մէջ .

Նիկիոյ ժողովին մէջ երեք հարիւր տասն եւ ութ հայրապետներ ժողովուած էին :

4. Մեր ազգէն ո՞ր հայրապետը ներկայ էր այդ ժողովին .

Ս. Գրիգոր լուսաւորչի կրտսեր սրբին Ս. Արիստակէս հայրապետ ներկայ էր այդ ժողովին :

5. Ս. Գրիգոր Լուսաւորիչ բան մ'աւելցո՞ւց հանգանակին վրայ .

Ս. Գրիգոր Լուսաւորիչ ի նշան իւր հաւանութեան կնքեց հանդանակը «Իսկ մեք փառաւորեսցուք» յաւելուածով :

6. Աւետարան ի՞նչ ըսել է .

Աւետարան աւետիս կոմ՝ աւետաւոր լուր պարունակող ըսել է, որ և կը կոչուի Նոր կտակարան :

7. Ս. Աւետարանը ո՞վ գրեց .

Մատթէոս, Մարկոս, Աուկաս Յովհաննէս աւետարանիչք գրեցին ի Աւետարանը :

8. Ի՞նչ լեզուաւ գրեցին .

Մատթէոս գրեց Եբրայեցւոց լեզուաւ, Մարկոս՝ Եգիպտացւոց, Ղուկաս՝ Ասորւոց, և Յովհաննէս՝ Յունաց լեզուաւ :

9. Նոր կտակարանին մէջ պատմուածներն ի՞նչ են .

Նոր կտակարանին մէջ պատմուածներն են .

Ա. Քրիստոսի ծնունդը :

Բ. Մկրտութիւնը :

Գ. Քարոզութիւնները :

Դ. Հրաշագործութիւնները :

Ե. Զարչարանքը, մահը, թաղումը :

Զ. Յարութիւնը :

Է. Համբարձումը :

Ասոնց հետ կցորդուած են նաեւ Առաքելոց գործերն և թղթերը :

Գ Ա Ս Խ Զ .

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

1. Ի՞նչ է եկեղեցին .

Եկեղեցի կ'ըսուի ճշմարիտ Աստուածապաշտութեան նպատակաւ ի մի

միաբանեալ հաւատացելոց ամբողջութիւնն, որուն գլուխը Քրիստոս է :

2. Եկեղեցի ինչ ազգի բառ է և ինչ կը նշանակէ .

Եկեղեցի Յունական բառ է և կը նշանակէ ժողով կամ ժողովուրդ :

3. Քանի՞ կը բաժնուի եկեղեցին .

Եկեղեցին երկու կը բաժնուի, Յաղթական եկեղեցի, Ձինուորեալ եկեղեցի :

4. Յաղթական եկեղեցին ո՞րն է .

Յաղթական եկեղեցի կ'ըսուի հրեշտակաց և սուրբ հոգիներու ժողովն որ երկկնքն է :

5. Ձինուորեալ եկեղեցին ո՞րն է .

Ամէն ճշմարիտ քրիստոնեայ՝ քրիստոսի զինուորեալ եկեղեցին է :

6. Ինչո՞ւ կ'ըսուի զինուորեալ .

Վասն զի քրիստոնեայք հոգեւոր զէնքով զինուած են մեղաց և սատանային դէմ կռուելու համար, որ հոգւոյ թշնամիներն են :

7. Ուրեմն ինչ են այն նուիրական շէնքեր՝ ուր մենք կ'երթանք աղօթելու .

Մեր աղօթատեղիներն նիւթական տաճարներ են, բայց եկեղեցի կը կոչուին, վասն՞զի քրիստոնեայք հոն կը

Ժողովուն ղԱստուած պաշտելու և փառաբանելու համար :

8. Որո՞նք են քրիստոնեայք .

Քրիստոնեայ կ'ըսուին անոնք որ Քրիստոսի կը հաւատան և մկրտուած են ամենասուրբ Երրորդութեան անուամբ և Քրիստոսի պատուէրները կը պահեն :

9. Ուրեմն ի՞նչ են չմկրտողք .

Անոնք որ մկրտուած չեն, Քրիստոնեայ չեն . և հաղորդակցութիւն չունին Քրիստոսի հետ :

10. Այդ մասին ի՞նչ ըսած է Քրիստոս .

Քրիստոս վճռապէս այս խօսքն ըսած է, «Նա՛ որ ջրէն և հոգիէն չէ ծնած, չկրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել» :

Գ Ա Ս Ե Կ .

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Զ Ա Յ Ո Յ

1. Մեր հայոց ազգն ե՞րբ եղաւ քրիստոնեայ .

Հրէաներէն զատ ամէն ուրիշ ազգաց մէջ՝ որ հեթանոս կը կոչուէին ի հնումն, առաջինն եղաւ մեր հայոց

ազգն, որ ընդունեց քրիստոնէութիւնը
առաջին լուսաւորիչ Ս. Թադէոս և
Բարթուղիմէոս առաքելոց ձեռքով,
այս պատճառաւ Հայոց եկեղեցին կը
կոչուի Անդրանիկ Գրիսունեայ եկեղեցի:

2. Այդ սրբազան առաքեալք ինչ գործեր կա-
տարեցին. Հայոց մէջ.

Ս. Թադէոս բժշկեց սրբոյն Աբ-
գարու հիւանդութիւնը. մկրտեց զնա
և նորա ընտանիքն, ինչպէս նաեւ շատ
ժողովուրդ, եկեղեցիներ կառոյց շատ
քաղաքներու մէջ, և ձեռնադրեց
եպիսկոպոսներ:

3. Ուրիշ.

Ս. Բարթուղիմէոս առաքեալ Հոգ-
եաց վանքն հիմնեց. կառոյց նաեւ շատ
եկեղեցիներ և ձեռնադրեց քահա-
նաներ:

4. Ո՞վ եղաւ գլխաւոր թշնամի քրիստոնէու-
թեան Հայոց.

Սրբոյն Աբգարու քեռորդին Սա-
նատրուկ երբ քրիստոնէութիւնն ու-
րանալով նորէն գարձաւ կռապաշտու-
թեան, նահատակեց անդթութեամբ
Ս. Թադէոս և Բարթուղիմէոս առաք.

եալները, իւր աղջիկը՝ Ս. Սանդուխտ
կոյսն, և ուրիշներ :

5. Ուրեմն քրիստոնէութիւնն խախտնեցաւ Հա-
յոց մէջ .

Քրիստոնէութիւնը՝ հակառակ ա-
մէն տեսակ հալածանաց, ծածուկ և
յայտնի պաշտպանուեցաւ և հետզհե-
տէ տարածուեցաւ Հայոց մէջ մինչեւ
ի սուրբն Գրիգոր :

6. Ո՞վ է Ս. Գրիգոր .

Ս. Գրիգոր՝ երկրորդ լուսաւորիչն
է Հայոց, որ յամի Փրկչին 303 բոլոր
Հայոց ազգը դարձուց ի լոյս աստուած-
գիտութեան, և կուսապաշտութիւնը
ջնջեց :

7. Ս. Գրիգոր որմէ՞ ձեռնադրուեցաւ Եպիսկոպոս .

Ս. Գրիգոր՝ Եպիսկոպոս ձեռնադ-
րուեցաւ Կեսարիոյ Ս. Ղեւոնդ Հայ-
րապետէն, որ Թագէոս առաքելոյ
ձեռնադրած Թէոփիլոս Եպիսկոպոսի
յաջորդներէն էր :

8. Ս. Լուսաւորիչ ո՞ր հաստատեց հայրապետու-
թեան աթոռը .

Ս. Լուսաւորիչ Հայրապետական Ա-

Թոռն Հաստատեց Ս. Էջմիածնայ կաթողիկէ մայր տաճարին մէջ, զոր շինել տուաւ՝ Քրիստոսի կողմանէ իւր տեսիլքին մէջ ցոյց տրուած ձեւին համեմատ :

Գ Ա Ս ԽԸ.

ՆՇԱՆ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ԵԿԵՂԵՑՈՅ

1. Քրիստոսի Ս. Եկեղեցին բանի՛ նշան կամ յասկութիւն ունի .

Քրիստոսի Եկեղեցին ունի չորս յասկութիւն՝ միութիւն, սրբութիւն, բնոյ հանրականութիւն և առաքելականութիւն :

2. Եկեղեցին ինչո՞ւ նմար մի կըսուի .

Եկեղեցին մի կըսուի, որովհետեւ մի է զբախն Եկեղեցւոյ Քրիստոս. և նմար հաւատացողք մի և միաբան են հաւատով, յաւատով և սիրով :

3. Ինչո՞ւ նմար սուրբ կըսուի .

Եկեղեցին սուրբ կըսուի, որովհետեւ քրիստոսնեայք սրբուած աւ մաքրուած են Ս. Աւագանին մկրտու-

Թեամբ, և քրիստոնէական եկեղեցին սրբութիւն կը քարոզէ :

4. Ինչո՞ւ համար ընդհանրական կամ կաթողիկէ կ'ըսուի .

Ընդհանրական անոր համար կ'ըսուի որ քրիստոնէութիւնը բոլոր աշխարհ տարածուած է և պիտի տարածուի Քրիստոսի խոստման համեմատ, և պիտի տեւէ մինչեւ ցվերջ աշխարհի :

5. Ինչո՞ւ համար առաքելական կ'ըսուի .

Առաքելական անոր համար կ'ըսուի որ քրիստոնէական հաւատքը որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի վրայ հիմնուած է, և անոր Առաքելոց քարոզութեան վրայ հաստատուած է :

6. Ինչ են խորհուրդք եկեղեցւոյ .

Խորհուրդ կ'ըսուին այն սրբազան արարողութիւնք, որոց միջոցաւ Ս. Հոգւոյն շնորհքները հաւատացելոց կը ներգործեն փրկութեան համար :

7. Քանի՞ են խորհուրդք եկեղեցւոյ .

Եօթն են խորհուրդք եկեղեցւոյ .
Ա. Մկրտութիւն .

Բ. Դրոշմ .

Գ. Ապաշխարութիւն.

Դ. Հաղորդութիւն.

Ե. Պսակ ամուսնութեան.

Զ. Կարգ Քահանայութեան կամ
Չեռնագրութիւն.

Է. Օծումն հիւանդաց:

8. Այդ եօթն խորհուրդք հարկաւոր են ամէն
քրիստոնէի.

Առաջին չորս խորհուրդներն հար-
կաւոր են ամենուն. բայց վերջին
երեքը՝ միայն մասնաւորաց համար են:

9. Այդ խորհուրդներ կրնան կրկնուիլ.

Մկրտութիւն, գրոշմ և կարգ քա-
հանայութեան չեն կրնար կրկնուիլ,
բայց միւսները կը կրկնուին հարկ
եղած ատեն:

Դ Ա Ս ԽԹ.

Մ Կ Ր Տ Ո Ւ Յ Ի Ի Ն

1. Մկրտութիւնն ինչ է.

Մկրտութիւնը Ս. Խորհուրդ մըն է,
որ կը կատարուի Ս. Աւագանին մէջ
բնական ջրով և բանիւն Աստուծոյ:

2. Մկրտութիւնն ինչպէս կ'ըլայ .

Քահանան՝ ամենատուրք երրորդութեան անուամբ երախայն ջրոյ մէջ երեք անգամ ընկղմելով կը լուանայ զայն :

3. Ինչո՞ւ համար կ'ընկղմէ .

Ընկղմելն օրինակ է Քրիստոսի մահուան և երեքօրեայ թաղման :

4. Մկրտութեան օգուտն ինչ է .

Երախան մկրտութեամբ կը մաքրուի սկզբնական մեղքէն, որոյ մէջ ծնած է . մանաւանդ վերստին ծնընդեամբ Ս. Աւագանին կ'ըլլայ որդի Աստուծոյ, քրիստոնեայ և անդամ Ս. Եկեղեցւոյ :

5. Մկրտութեան Ս. Խորհուրդն ընդունելու ինչ պայման կայ .

Երախան՝ եթէ տղայ է, իւր կրնքահօր բերնով, և եթէ չափահաս է, ինքնին պարտի խնդրել Հաւատք, Յոյս, Սէր և Մկրտութիւն :

6. Հաւատքն ինչ է .

Հաւատքն այն ներքին հաստատ յամոզումն է, որով մենք կը դաւաժմք Աստուծոյ խօսքով յայտնուած շմարտութիւնները :

7. Այդ ճշմարտութիւններ ո՞ւր կը գտնուին .

Ասոնք կը գտնուին Ս. Գրոց մէջ, որ կը կոչուի Հին և Նոր Կտակարան :

8. Յոյսն ի՞նչ է .

Յոյսն՝ Աստուածային պարգեւ մ'է, որով կ'սպասենք վայելել Աստուծոյ խոստացած բարիքները թէ՛ հոս և թէ՛ հանդերձեալին մէջ :

9. Աստուծոյ խոստացած բարիք որո՞նք են .

Այս բարիքներն են կեանք, հանգստութիւն և անվախձան երանութիւն :

10. Սէրն ի՞նչ է .

Սէրը գերազանց առաքինութիւն մ'է, որով մենք կը սիրենք զԱստուած ամէն բանէ վեր, մեր ընկերն ալ մեր անձին պէս :

11. Ո՞վ է մեր ընկերը .

Մեր ընկերքն են մեր եզբարք և մեր հայրենակիցք, ինչպէս նաեւ ամէն մարդիկ, և նոյն իսկ մեր թշնամիք :

12. Դրոշմն ի՞նչ է .

Դրոշմն է սուրբ միւռոնով օծումն այս խորհուրդն առաքելոց ժամանակ

ձեռնագրութեամբ միայն կը կատարուէր, որով Ս. Հոգին կ'ստանային մկրտեալք ։

13. Հիմա ինչպէս կը կատարուի .

Դրոշմը կը կատարուի երախային նախ ճակատը, ապա աչքերն, ականջները, քիթը, բերանը, ձեռքերը, սիրտը, կռնակը և ոտքերը՝ Ս. Միւսունով խաչածեւ օծուելով ։

14. Դրոշմն ինչ օգուտ ունի .

Դրոշմը՝ Ս. Հոգւով կը զօրացնէ մկրտեալը քրիստոնէական հաւատքն ու պատուէրները պահելու համար ։

Գ Ա Ս Մ .

Ա Պ Ա Շ Խ Ա Ր Ո Ւ Յ Ի Ի Ն

1. Ապաշխարութիւնն ինչ է .

Ապաշխարութիւնը մեր ներդործական մեղաց թողութեան համար հաստատուած խորհուրդ մ'է ։

2. Ապաշխարութիւն ինչ ըսել է .

Ապաշխարել՝ կը նշանակէ ապա աշխարել, այսինքն զղջալ և ինքզինքը աղօթից նուիրել ։

3. Ապաշխարութեան կարեւոր պայմաններն որոնք են.

Ապաշխարութեան պայմաններն ստոնք են. պէտք է որ քահանային առջեւ մեր մեղքերը ամբողջ խոստովանինք, ի սրտէ գղջանք գործած մեղքերնուս վրայ, և նոյն մեղքերը վերստին չգործելու հաստատ առաջադրութիւն ընենք :

4. Ինչո՞ւ համար քահանային խոստովանելու է.

Վասն զի քահանան՝ Աստուծոյ և մարդոց մէջտեղ միջնորդ մ'է զգլացողին մեղքերուն համար Աստուծմէ թողութիւն խնդրելու :

5. Ինչպէս խոստովանելու է.

Պէտք է որ եկեղեցւոյ մէջ քահանային առջին ծնկան վրայ դալով ըսենք զգղման աղօթքը :

«Մեղայ ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, մեղուցեալ եմ Աստուծոյ, խոստովանիմ առաջի Աստուծոյ, և սրբուհւոյ Աստուածածնին և առաջի քո՝ հայր սուրբ, դամենայն մեղս զոր գործեալ

եմ, քանդի մեղայ խորհրգով, բանիւ
և գործով, կամայ և ակամայ, դիտու-
թեամբ և անդիտութեամբ, մեղայ
Աստուծոյ, եւայլն :

6. Ասկէ ետքն ինչ ընելու է .

Պէտք է նաեւ որ մեղքերնիս
առանց պահելու ըսենք քահանային մի
ըստ միոջէ . մանաւանդ եթէ մէկուն
հետ ոխ կամ քէն ունինք, իսկոյն անոր
հետ հաշտուելու ենք որ արձակումն
առնունք օրինաւորապէս :

7. Արձակումն ինչպէս խնդրելու է .

Քահանային պատուէրներն ու խը-
րատները սիրով կատարելու խօսք տալէ
յետոյ պէտք է ըսել . « Հայր սուրբ,
զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան և
բարեխօս առ միածին Որդին Աստու-
ծոյ, զի իշխանութեամբդ՝ որ տուեալ
է քեզ, արձակեցես զիս ի կապից մե-
ղաց իմոց, աղաչեմ զքեզ » :

8. Ապաշխարողի մը պարտաւորութիւնները ու-
նք են .

Ապաշխարողի մը պարտաւորու-
թիւններն են՝ աղօթք, պահք և ողոր-
ւութիւն :

9. Ներգործական մեղք ըսուածն որն է .

Ներգործական կ'ըսուին այն մեղքերը՝ զոր կամաւ և գիտութեամբ կը գործենք :

10. Քանի՞ կը բաժնուի .

Ներգործական մեղքն երկու տեսակ է . մահու չափ և ներելի :

11. Որո՞նք են մահու չափ կամ մահացու ըսուածները .

Մահացու են այն ծանր մեղքերն , որոնք մեր հոգին կ'սպաննեն և կը մատնեն դատապարտութեան :

12. Կրնա՞ս ըսել ինձ որո՞նք են ատոնց գլխաւորները .

Ատոնց գլխաւորներն եօթն են .

1. Հպարտութիւն , 2. Նախանձ ,
3. Բարկութիւն , 4. Ծուլութիւն ,
5. Աղահուցութիւն , 6. Որկրամոլութիւն ,
7. Բղջախոհութիւն :

13. Այս մոլութեանց ներհակ ի՞նչ առաքինութիւններ կան .

Այս մոլութեանց դէմ եօթն առաքինութիւններ կան 1. Խոնարհութիւն , 2. Եղբայրսիրութիւն , 3. Հեզութիւն , 4. Աշխատասիրութիւն

5. Ողորմասիրութիւն, 6. Բարեխառնութիւն, 7. Ողջախոհութիւն ։

14. Ներելի համարուած մեղքերն որո՞նք են .

Ներելի կ'ըսուին այն փոքր ու թեթեւ մեղքերն, որ անդիտութեամբ կամ ակամայ կը դործուին ։

Դ Ա Ս Ծ Ա .

Ա. Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Թ Ի Ի Ն

1. Հաղորդութիւնն ի՞նչ է .

Հաղորդութիւնը Ա. Խորհուրդ մ'է, որ կը կատարուի Եկեղեցւոյ մէջ Ա. Պատարադի արարողութեամբ ։

2. Ե՞րբ և ո՞վ հաստատած է այդ խորհուրդը .

Քրիստոս տէրն մեր հաստատեց հաղորդութեան խորհուրդը իր չարչարանաց և մահուան առջի օրը, որ էր Աւագ Հինգշաբթի ։

3. Քրիստոս ի՞նչ պատուիրելով հաստատեց այդ խորհուրդը .

Քրիստոս պատուիրեց իր աշակերտաց որ այս խորհուրդը միշտ կատարեն իւր յիշատակին համար ։

4. Հաղորդութեան նիւթն ի՞նչ է.

Հաղորդութեան նիւթն է ցորենէ
Հաց և խաղողէ դինի:

5. Այլ խորհուրդն ի՞նչպէս կը կատարուի.

Պատարագիչ Քահանայն երբ «Առեք կերէք» ի և «Որդի Աստուծոյ» ի ժամանակ՝ աղօթիւք և խնդրուածովք կոչումն կ'ընէ Հոգւոյն սրբոյ, կը գաւանինք թէ այնուհետեւ Հացն և դինին՝ ո՛չ թէ լոկ հաց և դինի է, այլ ընդ տեսակաւ հացի և դինւոյ ճշմարիտ Մարմին և Արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի կը փոխարկի:

6. Հաղորդութիւն բարձր ի՞նչ կը նշանակէ.

Հաղորդութիւնը կը նշանակէ կը ցորդութիւն կամ մասնակցութիւն:

7. Ինչո՞ւ համար այդպէս կոչուած է.

Վասն զի Հաղորդութեամբ Քրիստոսի հետ կը միանանք, և նորա շնորհաց մասնակից կ'ըլլանք:

8. Պէտք է որ ամէն ատեն հաղորդուինք.

Պէտք է դռնէ տարւոյն հինգ տաղաւարին ամէն քրիստոնեայ Հոգեւ և մարմնաւոր մաքրութեամբ Հաղորդի Քրիստոսի մարմնոյ և արեան:

Գ Ա Ս Ծ Ք.

ՊՍԱԿ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ, ՕԾՈՒՄՆ ՇԻԱՆԴԱՅ

ԵՒ ԿԱՐԳ ՔԱՅԱՆԱՅՈՒԹԵԱՆ

1. Ինչ է պսակը.

Պսակը՝ եկեղեցւոյ խորհուրդ մ'է, որով այր և կին Աստուծոյ հրամանաւ իրարու հետ կը միանան իբրեւ ամուսին :

2. Ինչո՞վ կը կատարուի այդ խորհուրդը.

Պսակը կը կատարուի քահանային աղօթքովն և օրհնութեամբ :

3. Կրնա՞յ քակուիլ այդ միութիւնը.

Պսակաւ կապուած միութիւնը չկրնար քակուիլ, վասն զի ինչպէս որ Քրիստոս իւր եկեղեցիէն անբաժան է, այնպէս ուլ փեսան անբաժանելի է իւր հարսնէն :

4. Պսակի առաջին պայմանն ի՞նչ է.

Պսակին դիւսաւոր պայմանն է փեսային և հարսին իրարու հետ ունեցած ազատ հաճութիւնն ու հաւանութիւնը :

5. Հիւանդաց օծումն ի՞նչ է.

Հիւանդաց օծումն կ'ըսուի այն

խորհուրդն՝ որով քահանայն ազօթքով
և խնդրուածքով ձեռք կը դնէ հի-
ւանդաց վրայ ի բժշկութիւն հողոց
և մարմնոց :

6. Ինչո՞ւ համար օծումն հիւանդաց կ'ըսուի .

Օծումն հիւանդաց ըսուած է անոր
համար որ առաքելոց ժամանակ այս
խորհուրդը կը կատարուէր նաեւ հի-
ւանդը օրհնած իւզով օծելով :

7. Կարգն ի՞նչ է .

Եկեղեցական խորհուրդ մ'է կար-
գը, որ Ձեռնադրութիւն ալ կ'ըսուի :

8. Ա՞նչն մարդ կ'ընդունի՞ այդ խորհուրդը .

Այս խորհուրդն ամէն մարդ ըն-
դունելու պարտաւոր չէ, այլ միայն ժո-
ղովրդէն ընտրուած, եկեղեցիէն ըն-
ծայուած, և եպիսկոպոսէն իբր ար-
ժանաւոր ճանչցուած մարդիկ կ'ըն-
դունին զայն սպասաւորելու համար
Ս. Եկեղեցոյ :

9. Եկեղեցոյ սպասաւորութիւններն որո՞նք են .

Եկեղեցոյ սպասաւորութիւն են .
ժողովուրդն հովուել, Աստուծոյ խօսքի
անոնց քարոզել, եկեղեցոյ խոր-
հուրդները մատակարարել :

10. Եկեղեցական կարգ ընդունող կամ ձեռնադրուող մը ինչպէս ըլլալ պէտք է .

Եկեղեցական մը պէտք է որ ըլլայ վարքով բարքով մաքուր և անբիծ մարդ, սուրբ ամուսնութենէ ծնեալ և ուսեալ .

11. Կարգը քանի՞ աստիճաններ ունի .

Կարգը՝ եօթը աստիճաններ ունի ,

Ա. Դունապանութիւն .

Բ. Դպրութիւն .

Գ. Երդմնեցուցչութիւն .

Ե. Զահրնկալութիւն .

Ե. Կիսասարկաւադութիւն .

Զ. Սարկաւազութիւն .

Է. Քահանայութիւն :

12. Ուրեմն վարդապետութեան ինչ է .

Վարդապետութիւնը՝ ինչպէս նաեւ վարդապետական մասնաւոր և ծայրագոյն իշխանութիւնները զատ կարգեր չեն . այլ զանոնք ընդունողները կուսակրօն քահանաներ են, որք կենաց բանը կը քարոզեն և կ'առաջնորդեն ժողովրդեան :

13. Եպիսկոպոսութիւնն ինչ է .

Եպիսկոպոսութիւնը առաքելական

կարգ է. որ ունի իշխանութիւն ձեռնադրութեան և տեսչութիւն եկեղեցւոյ :

14. Կաթողիկոսութիւնն ի՞նչ է .

Կաթողիկոսութիւնը եպիսկոպոսապետութիւն կամ ծայրագոյն պատրիարքութիւն է, որոյ պաշտօնն է եկեղեցւոյ ընդհանուր կառավարութիւնը, եպիսկոպոսաց ձեռնադրութիւնը, Ս. Միւռոնի օրհնութիւնը, եւայլն .

15. Մեր Հայ. եկեղեցւոյ կաթողիկոսը որո՞ւ յաջորդն է .

Մեր ընդհանուր կաթողիկոսը յաջորդն է Թադէոս և Բարթոլղիմէոս առաքելոց և երկրորդ Լուսաւորիչ սրբոյն Գրիգորի :

Գ Ա Ս Մ Գ .

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՌԵԼՈՑ ԵՒ ՎԵՐՁԻՆ ԴԱՏԱՍՏԱՆ

1. Հանգանակին մէջ յիշուած « Յարութիւն մեռելոց » ն ի՞նչ ըսել է .

« Յարութիւն մեռելոց », ըսելով կ'իմանանք թէ մեռած մարդոց մարմինք օր մը Աստուծոյ հրամանաւ պիտի ող .

ջրննան և իրենց հոգիներուն հետ պիտի միաւորին ։

2. Ատոր ապացոյցն ինչ է .

Ատոր ապացոյցն է Քրիստոսի տեառն մերոյ բացարձակ խոստումն և մանաւանդ նորա փառաւոր յարութիւնը ։

3. Ինչո՞ւ համար մարմինք նորէն պիտի կենդանանան .

Մարդոց մարմինք անոր համար պիտի կենդանանան որ աշխարհի վրայ իրենց կատարած բարի կամ չար գործոց վերջնական արդար հատուցումն ընդունին ի Քրիստոսէ ։

4. Ե՞րբ պիտի ըլլայ մեռելոց յարութիւնը .

Գիտենք որ մեռելոց յարութիւնը աշխարհիս վերջը պիտի ըլլայ, բայց ո՞ր օրուան կամ ո՞ր ատենին որոշուած ըլլալը մարդ չգիտեր ։

5. Ի՞նչ է վերջին դատաստանը .

Վերջին դատաստանն ըսելով կ'իմանանք թէ Յիսուս Քրիստոս աշխարհի վերջը նորէն պիտի գայ իւր Աստուածային փառօք, և պիտի դատէ մարդկային աղբը, արդարները մեղաւորներէն ղատելով ։

6. Ի՞նչ հատուցումն պիտի ընէ Քրիստոս մարդկային ազգին .

Արդարներուն երկնից արքայութեան փառքը պիտի տայ, իսկ մեղաւորաց՝ դժոխոց դատապարտութիւնը :

7. Արքայութիւնն ի՞նչ է .

Արքայութիւնն անանկ երանաւէտ և յաւիտենական վիճակ մ'է, որ չը կրնար պատմուիլ . վասն զի ո՛չ աչքով տեսնուած, ո՛չ սականջով լսուած և ո՛չ իսկ մտքով գաղափարուած է :

8. Դժոխքն ի՞նչ է .

Դժոխքն յաւիտենական թշուառ վիճակ մ'է, որ լի է հոգեւոր և մարմնաւոր տանջանքներով :

9. Ուրեմն ի՞նչ ընելու ենք որ դժոխքէն ազատ և արքայութեան արժանի ըլլանք .

Պէտք է Քրիստոսի աւետարանական պատուէրները պահենք, առաքիւնական դորձեր կատարելու ջանանք, և այսպէս միշտ հոգւոյ արթնութեամբ պատրաստ գտնուինք մահուան և ահեղ գատաստանին :

Պ Ա Ս Ծ Գ .

Պ Ա Տ Ո Ւ Ի Ր Ա Ն Ք Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ա Կ Ա Ն

Կ Ա Մ

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն Ա Ռ Ա Ք Ի Ն Ո Ւ Յ Ի Ի Ն Ք

1. Որո՞նք են աւետարանական պատուիրանաց գլխաւորք .

Աւետարանական պատուէրներն են սէր, խոնարհութիւն, համբերութիւն և ներողութիւն :

2. Որո՞ք են առաքինական գործեր .

Առաքինական գործեր երկու կարգ կը բաժնուին, որք են հոգեւոր և մարմնաւոր գործք ողորմութեան :

3. Ի՞նչ են հոգեւոր գործք ողորմութեան .

Այս եօթնն են հոգեւոր գործք ողորմութեան .

Ա. Տղէտներուն սորվեցնել .

Բ. Գէշ ընթացքի մէջ եղողները խրատել .

Գ. Խորհուրդի կարօտեալներուն տրհուրդ տալ .

Դ. Ուրիշներուն պակասութեանց ամբերել .

Ե. Ուրիշի նախատանաց ներել .

Զ. Վշտացեալները մխիթարել.
Է. Կենդանեաց և մեռելոց, և
նոյն իսկ մեզ հալածողաց համար ա-
ղօթել:

4. Որոնք են մարմնաւոր գործք ողորմութեան.
Այս եօթն են մարմնաւոր գործք
ողորմութեան.

Ա. Անօթիին հաց և ծարաւին
ջուր տալ.

Բ. Պանդուխտները հիւրասիրել.

Գ. Մերկերը պատսպարել.

Դ. Հիւանդաց այցելու ըլլալ.

Ե. Բանտարկելոց տես երթալ.

Զ. Գերիները աղատել.

Է. Անտէր մեռեալները թաղել.

5. Բարոյական առաքինութիւնք քանի՞ են.

Բարոյական առաքինութիւնք այս
չորսն են. Խոհեմութիւն, Արիութիւն,
Արդարութիւն և Ժուժկալութիւն:

6. Ի՞նչ վարձք և փոխարէն խոստացած է Քրիս-
տոս իւր պատուէրներն ու խրատները պահողին.

Քրիստոս տէրն մեր խոստացաւ թէ
այս աշխարհի և թէ՛ հանդերձեալին
մէջ յաւիտենական երանութիւն պար-
գեւել ամէն անոնց, որ իր պատուէր-
ները պահեցին ու առաքինացան:

7. Ինչպէս խոստացաւ զանոնք.

Հետեւեալ ինն երանութիւնով, զոր խօսած է Ինք իւր Ս. Աւետարանին մէջ :

1. Երանի՛ հողւով աղքատներուն, որ արքայութիւնը պիտի ստանան :

2. Երանի՛ սգաւորներուն, որ պիտի մխիթարուին :

3. Երանի՛ հեղերուն, որ երկիրը պիտի ժառանգեն :

4. Երանի՛ արդարութեան քաղցու ծարաւն ունեցողներուն, որ պիտի յագենան :

5. Երանի՛ ողորմածներուն, որ ողորմութիւն պիտի գտնեն :

6. Երանի՛ սրտով սուրբերուն, որ զԱստուած պիտի տեսնեն :

7. Երանի խաղաղասէրներուն որ Աստուծոյ որդի պիտի կոչուին :

8. Երանի՛ արդարութեան համար հալածուողներուն, որոնց համար է երկնից արքայութիւնը :

9. Երանի՛ իմ անուանս համար աւիրաւ տեղը նախատուող, հալածուող բամբաստուողներուն, որոնց վարձքը ատ է երկնից մէջ :

Գ Ա Ս Մ Ե Ն .

ԱՌԱԿՔ ՔՐԻՍՏՈՍԻ

1. Քրիստոս ի՞նչ առակ խօսած է Աստուծո՜ւ սիրութեան վրայ .

— Երկու հողի, ըսաւ, պարտք ունէին մէկ մարդու, մէկուն պարտքն էր 500 դահեկան, միւսինը 50. առնելիքի տէրը երկուքին ալ պարտքը բաշխեց. հիմա այս երկուքէն ո՞րը աւելի սէր ունենալու է առնելիքին տիրոջ վրայ. հարկաւ աւելի պարտք ունեցողը : Այս ըսելով արդարացուց այն մեղաւոր կինը՝ որ իւր արտասուօք Յիսուսի ոտքերը կը թրջէր, մաղերովը կը չորցնէր և կը համբուրէր, և յետոյ անուշ իւղով կ'օծէր :

2. Այս առակէն ի՞նչ պիտի հասկնանք .

— Այս առակէն սա հասկնալու ենք որ ո՞րչափ շատ մեղքերու մէջ ալ ինկած լինիմք. կրրնանք թողութիւն ընդունիլ Աստուծմէ, եթէ սրբտանց և ջերմեռանդութեամբ ապաւինիմք Աստուծոյ սիրոյն և գթութեանը :

3. Աստուծոյ շնորհքն արդիւնաւորելու համար խօսած առակը ի՞նչպէս է .

— Սերմանացան մը սերմ ցանելու ել սերմերէն մաս մը ձասբուն վրայ իյնալով թռչունները կերան. մաս մը քարուտ տեղուանք իյնալ արմատ չըռնեցին ու չորցան, մաս մ'ալ փուշե

մէջ լինալով խղզուեցան . սակայն պարարտ հողի վրայ ինկած սերմերն աճելով մէկ հատի տեղ բազմապատիկ պտուղ տուին :

4. Կրնա՞ս այս առակը բացատրել .

— Այս առակին մէջ յիշուած սերմերն են Աստուծոյ խօսքերն ու պատուէրները . իսկ գետիններն են մարդոց սիրտերը . ուստի քարոտ, փշոտ երկիրներու նման սիրտ ունեցող անհաւատ և աշխարհասէր մարդիկ հարկաւ առաքինական արդիւնքէ զուրկ են միշտ . իսկ պարարտ և բեղմնաւոր երկրի նմանով բարեսիրտ մարդիկ՝ շատ առաքինական պտուղներ կուտան :

5. Իրարու յանցանք ներելու մասին ի՞նչ առակ խօսած է .

— Թագաւոր մը՝ ըսաւ Յիսուս , իր ծառաներէն մէկուն աղաչանքին չդիմանալով անոր տասն հաղար քանքար պարտքը ներեց . բայց այս ծառան իւր ծառայակիցներէն մին՝ հարիւր դահեկան առնելիք մը ունենալուն համար բանտը նետել տուաւ . այս բանը յետոյ թագաւորն իմանալով բարկացաւ և կապել տալով այն անիրաւ ծառան , բոլոր պարտքը հատուցանել տուաւ :

6. Այս առակէն ի՞նչ կ'իմացուի .

— Այս առակէն սա կ'իմացուի որ եթէ մենք իրարու յանցանք չներենք անյիշաչարութեամբ , Աստուած ալ մեր մեղաց թողութիւն չտար երբեք :

7. Ընկերին կարեկցելն ի՞նչ առակով սորվեցուց Յիսուս :

— Մարդ մը, ըսաւ Յիսուս, Երուսաղէմէն Երիւքով եկած ատեն ճամբան աւազակներու ձեռքն ինկաւ, որք զանի վիրաւորելով կիսամեռ թողուցին. նոյն ճամբէն հետզհետէ Քահանայ մը և Ղեւտացի մը անցնելով վիրաւորեալը տեսան և զանց ըրին, ամենէն ետքը Սամարացի մը անկէ անցնելով երբ վիրաւորեալը տեսաւ, գութը շարժելով



անոր վէրքը կապեց, և պանդոկ մը տանելով զանի իր ստակով դարմանել տուաւ :

8. Ի՞նչ հասկնալու ենք ասկէ :

— Այս առակէն հասկնալու ենք որ ամենքս ալ պարտաւոր ենք Սամարացւոյն նմանելով մեր ընկերին օգնել, և մեր ձեռքէն եկած բարիքը անոր ընելու փոյթ ունենալ. և ո՛չ թէ Ղեւտացւոյն ու Քահանային նման անտարբեր մնանք, որով և զրկուինք Աստուծոյ օգնութենէն :

9. Ի՞նչ առակով հասկցուց Յիսուս թէ մարդ մը Աստուծոյ դիմելու է որչափ և մեղաւոր ըլլայ .

— Մարդ մը, ըսաւ Յիսուս, երկու զաւակ ունէր, պզտիկը՝ հօրմէն իր ժառանգութեան բաժինն առնելով հեռի երկիր մը գնաց, և հոն անառակութեամբ բոլոր ունեցածը փճացուց . երբ անտաննելի խեղճութեան մէջ ինկաւ, զղջալով իր ըրածին վրայ հօրը տունը դարձաւ, մեղայ դուչեց և



աղաչեց հօրը՝ որ զինքը գոնէ ծառայի մը պէս ընդունի . հայրը գթալով ո՛չ միայն համբուրիւ ընդունեց իր անառակ որդին, այլ և մեծ խնճոյք մ՞ըրաւ անոր դարձի գալուն համար :

10. Այս առակին միտքն ի՞նչ է .

— Այս առակին մէջ յիշուած անառակն՝ օրինակ է մեղաւոր մարդոց . երեց որդին՝ հրեշ-

տակաց . իսկ հայրն՝ Աստուած ամենակալ է , որ չուզեր երբէք մեղաւորին կորսուիլը , այլ կ'սպասէ գթութեամբ անոր դարձի գալուն . և եթէ զղջայ , անշուշտ կը ներէ անոր յանցանքներուն :



11. Աղքատասիրութեան վրայ Յիսուս ի՞նչ առակ խօսեցաւ .

— Հարուստ մարդ մը , ըսաւ Յիսուս , լսելով որ իր տնտեսը աւելորդ ծախքեր ըրեր և ստակը պարապ տեղը վատներ է , զանի իւր պաշտօնէն հանել ուզեց : Տնտեսը զայս լսելով հասկցաւ որ ետքը ապրուստի կարօտ ու խեղճ պիտի ըլլայ , ուստի տիրոջը պարտականները կանչելով , անոնց պարտքերուն մէյմէկ մասը պակսեցուց . տէրը երբ իմացաւ իւր տնտեսին այս խելացի վարմունքը , գովեց զանիկա :

12. Այս առակով ի՞նչ հասկցուց Յիսուս .

— Հասկցուց Յիսուս այս առակով որ մեր ձեռքը գտնուած դրամով և կարողութեամբ՝ որ Աստուածային պարգեւներ են, պէտք է որ աղքատները շահինք Տնտեսին նման . որով միայն կրնանք հաճելի ըլլալ Աստուծոյ :

13. Աշխատատիրութեան համար Յիսուսի խօսած առակն ի՞նչ է .

— Տէր մը, որ հեռի երկիր կ'երթար, կանչելով իր ծառաները, մէկուն հինգ, մէկուն երկու և միւսին մէկ քանքար տուաւ, և պատուիրեց որ աշխատին առաժնին աւելցնելու . վասն զի ետքը տոկոսովը պիտի պահանջէր . հինգ քանքար առնողն աշխատելով հինգ ալ վրան շահեցաւ, ինչպէս նաեւ երկու առնողն ալ երկու աւելի վաստրկեցաւ . սակայն մէկ քանքար առնողը՝ անհողութեամբ առածը ծածկեց և բան մը չշահեցաւ, երբ տէրը դարձաւ եկաւ, առաժնին շահեցնող ծառաները գովեց, և մեծ պաշտօններու հասուց զանոնք . բայց քանքարը պահող անհող ծառան պատժեց և ունեցածն ալ ձեռքէն առնելով, տասն քանքար ունեցողին տուաւ :

14. Այս առակով ի՞նչ իմացնել ուզեց Յիսուս .

Յիսուս այս առակով իմացնել ուզեց որ իւրաքանչիւր ոք իւր կարողութեան համեմատ Աստուծմէ շնորհք ընդունած ըլլալով արդէն, աշխատելու է զանի արդիւնաւորելու . ապա թէ ո՛չ՝

քանքարաթագոյց ծառային պէս պիտի զրկուի վարձատրութենէ :

15. Աղօթասիրութեան առակն ի՞նչպէս է .

— Քաղաքի մը մէջ դատաւոր մը կար, ըսաւ Յիսուս , որ Աստուծմէ չէր վախնար ու մարդոցմէ չէր ամչնար . այրի կին մ'ալ ամէն օր կուգար կ'աղաչէր անոր , որ իր դատաստանը կարէ . դատաւորն երկար ատեն հոգ չտարաւ . բայց կինը ա'յնչափ գնաց եկաւ ու թախանձեց , որ դատաւորն ա'լ չգիմանալով անոր դատը տեսաւ :

16. Բացատրէ ինձ այս առակը .

— Այս առակին մէջ յիշուած դատաւորն է Աստուած . այրի կինն ալ օրինակ է մեղաւոր մարդոց , որք եթէ սրտի մտօք միշտ աղաչեն զԱստուած իրենց ողորմելու , անշուշտ ուշ կամ կանուխ պիտի լսէ անոնց աղաչանաց և խնդրուածքնին պիտի կատարէ :

17. Հեզ և խոնարհ լինելու մասին ի՞նչ առակ խօսեցաւ Յիսուս .

— Փարիսեցի մ'ու մաքսաւոր մը տաճարը ելան աղօթելու . Փարիսեցին իր բարեգործութիւնները յիշելով կը պարծենար, և «Փառք քեզ Աստուած , սա մաքսաւորին պէս չարագործ չեմ» կ'ըսէր . բայց մաքսաւորը հեռուն կայնած , մինչեւ անգամ չէր համարձակեր աչքերն երկինք վերցնել , այլ ձեռքը կուրծքին զարնելով կ'ըսէր . «Աստուած , մեղաւորիս թողութիւն տուր» . ուս .

տի մաքսաւորը իւր խոնարհութեամբ Փարիսեցիէն աւելի արդար և հաճելի եղաւ Աստուծոյ :

18. Ի՞նչ պիտի հասկնանք այս առակէն .

— Այս առակէն սա պիտի հասկնանք որ խոնարհամիտ մարդիկ ո՛րչափ ալ մեղաւոր ըլլան, պիտի բարձրանան առաջի Աստուծոյ, մինչդեռ ամբարտաւանից առաքինութիւնը՝ զոր մարդոցմէ պատիւ և փառք վայելելու համար միայն կը գործեն, ապարդիւն պիտի մնայ և ոչ երբէք պիտի համարուի արդարութիւն :



19. Ի՞նչ առակով հասկցուց Յիսուս թէ պէտք է յոյս դնել աշխարհի վրայ .

— Հարուստ մարդ մը, ըսաւ., ամէն օր փառաւոր հագուած սգուած կերուխումի և ուրախութեան մէջ էր, անոր դրան տակն ալ Ղազարոս անուն աղքատ մի կար՝ ա՛յնքան ողորմելի, որ շուները կը լիզէին անոր վէրքերը, հարուստը

ընաւ չէր ողորմեր այս աղքատին, որ իր սեղանին փշրանքներովը կ'ապրէր. երբ ասոնք երկուքն ալ մեռան, հարուստը՝ որ դժոխք գացած էր, աչքը վերցնելով տեսաւ Ղազարոսը Աբրահամու գիրկը նստած, սկսաւ սյսպէս աղաղակել. «Հա՛յր Աբրահամ, ողորմէ՛ ինձի, զրկէ Ղազարոսը որ մատին ծայրովը քիչ մը ջուր կաթեցնէ լեզուիս, քանզի կը պապակիմ» . «Ո՛չ, ըսաւ Աբրահամ, Ղազարոս չկրնար գալ. միտքդ բեր անգամ մը աշխարհի վրայ վայելած բարիքներդ և Ղազարոսին կրած տանջանքները. ուստի հիմա դու պէտք է որ տանջուիս և սա մխիթարուի» :

20. Ի՞նչ է այս առակին միտքը .

— Յիսուս այս առակով հանդերձեալ աշխարհի վիճակը նկարագրեց պարզապէս. և հասկցնել ուզեց որ մարդիկ՝ եթէ աշխարհի հարստութեան և վայելքներուն կապուած լինելով, զայն ի վայելա իրենց անձին գործածեն միայն և ո՛չ ընկերին, մեծատան պէս պիտի զրկուին յախտենական կեանքէն և պիտի դատապարտուին տանջանաց :

21. Ի՞նչ առակ խօսեցաւ Յիսուս իրեն ներկայանալու համար պատրաստ գտնուելնու մասին .

— Սա առակը խօսեցաւ : Տասն կուսանք կային, որոց հինգն իմաստուն էին և հինգը յիմար. ասոնք լապտերնին առած փեսան գիմաւորել գացին . իւսաստունները հետերնին ձէթ ալ առլ բայց յիմարները չառին . կէս գիշերուն ձայն ել

Թէ « ահա փեսան կուգայ » . ուստի բոլորը մէկանց լապտերնին պատրաստեցին . երբ յիմարները ձէթ չունենալուն համար իմաստուններէն փոխ ուզեցին, ասոնք չտուին ըսելով, Թէ իրենց ձէթն հազիւ կը բաւէր . ուստի յիմարք ծախողներէն գնելու գացին, և ահա փեսայն եկաւ և իմաստուն կուսանք անոր հետ մտան հարսանեաց տունը, գուռները գոցուեցան և յիմար կուսանք դուրսը մնացին ու փեսայէն չճանչցուեցան :



22. Կրնա՞ս մեկնել ինձ այս առակը .


— Այս առակին մէջ յիշուած փեսան՝ է փրկիչն մեր Քրիստոս . հարսնիքն՝ է երկնից արքայութիւնը, իմաստուն կուսանք են արդար հոգիք, որ իրենց առաքինութեան լապտերն ու ողորմածութեան ձէթը պատրաստ ունենալով պիտի ընդունուին յարքայութիւնն երկնից . իսկ յիմար կուսանք՝ են մեղաւորք, որք թափուր լինելով այս

ամէն բարեմասնութիւններէ, պիտի զրկուին յաւիտենից երանութենէն :

23. Յիսուս իւր չարչարանաց և մահուան վրայօք ալ առակ խօսած է ժողովրդեան .

— Մարդ մը՝ ըսաւ Յիսուս, այգի տնկելով մշակներու յանձնեց . յետոյ ժամանակին ծառաները զրկեց որ պտուղէն բերեն . բայց մշակներն՝ անոր ծառաներէն ո՛ր մէկը տանջեցին, ո՛ր մէկը քարկոծեցին, ո՛ր մէկն ալ սպաննեցին : Այգիին տէրը ուրիշ ծառաներ զրկեց, մշակներն անոնց ալ անանկ ըրին . յետոյ տէրը իր որդին զրկեց յուսալով որ անկէ կ'ամչնան . բայց մշակները անօրէնութեամբ որդին ալ սպաննեցին որ այգին բուրովին իրենց մնայ :

Ահաւասիկ այս առակին մէջ այգետէրն է Աստուած . այգին՝ Հրէից ազգն է . ծառաներն՝ են Մարգարէները . իսկ Որդին՝ Փրկիչն մեր Յիսուս Գրիստոս :



ՅԱԻԵԼՈՒԱԾ

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՏՕՆՔ ՀԱՅ. Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ(1)

1. Հայ. Ս. Եկեղեցւոյ տէրունական աւուրք որո՞նք են .

— Հայ. Ս. Եկեղեցւոյ տէրունական տօնի աւուրք երկու կարգի կը բաժնուին . Գլխաւոր և երկրորդական :

2. Գլխաւորներն որո՞նք են .

— Գլխաւորներն՝ որ հինգ տաղաւար ալ կը կոչուին, ասոնք են . Մնունդ, Զատիկ, Վարդաւառ, Աստուածածին, Խաչվերաց :

3. Այդ գլխաւոր տօներ ունին իրենց որոշ օրերն ու ժամանակներ .

— Գրիստոսի ծննդեան և մկրտութեան տօնը կը կատարուի միշտ Յունվար 6 ին :

Զատիկն՝ որ է Յիսուի Գրիստոսի Յարութեան տօնը, Մարտ կամ Ապրիլ ամսոյ մէջ :

Վարդաւառ՝ որ է տօն այլակերպութեան, ^Ս ուրիս ամսոյ մէջ :

(1) Սոյն յաւելուածը թէեւ կրօնազիտական ընդարկ ուսանելեաց կը պատկանի, սակայն հետաքրքիր մանուկոյն նախնական տեղեկութիւն մի տալու համար արեւն համարուեցաւ զնեյ աստ համառօտիւ :

Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը՝ Օգոստոս ամսոյ մէջ .

Խաչվերացի տօնը՝ Սեպտեմբեր ամսոյ մէջ :

4. Երկրորդական տօներ որո՞նք են .

— Երկրորդական տօներ կը համարուին Տեառնընդառաջ, Աւագ Հինգշաբթի, Տօն համբարձման, Տօն Հոգեգալստեան, Տօն Կաթողիկէ եկեղեցւոյ, Երեւման Խաչ, Վարագայ Խաչ, Գիւտ Խաչ :

5. Ի՞նչ է Երեւման Խաչի տօնը .

— Երեւման Խաչի տօնը Յիշատակութիւնն է Քրիստոսի Ս. Խաչին ա՛յն պայծառ երեւման, որ տեղի ունեցած է Ս. Երուսաղիմայ մէջ Կիւրեղ Ս. Հայրապետի օրով :

6. Ի՞նչպէս եղած է այդ երեւում .

— Քրիստոսի 331 թուականին Հոգեգալլստեան տօնին օրը ցերեկ ատեն՝ Ս. Խաչին նշանը Գողգոթայի և Ձիթենեաց լեռներուն վրայ արեգակէն աւելի լուսաւորութեամբ ցոլանալով, բազմաթիւ ժողովուրդք զայն տեսած և շատ մարդիկ դարձած են Քրիստոնէութեան :

7. Վարագայ Խաչի տօնն ի՞նչ է .

— Քրիստոսի 653 թուականին Թոթիկ անուն սրբակեաց Հայ ճգնաւորի մը միջոցաւ Վարագ 1 րան վրայ յայտնուած Ս. Խաչին յիշատակն է :

8. Այդ Խաչին վրայօք ի՞նչ կ'աւանդուի պատմութեան մէջ .

— Կ'աւանդուի թէ այս Խաչը Քրիստոսի արիւնամած Խաչին այն մասն էր, զոր Տեառնեղբայր Յակոբոս առաքեալ՝ նուիրած էր Պատրոնիկէ անուն բարեպաշտ թագուհւոյ մը, որմէ ժառանգարար իւր թոռան՝ Ս. Հռիփսիմէ կուսին մնացած էր :

9. Խնչպէս եղաւ որ այդ Խաչ յայտնուեցաւ Վարազ լերին վրայ .

— Քրիստոսի 301 թուականին Ս. Հռիփսիմէ կոյս իւր ընկերուհիներով Հռովմայեցւոց կայսեր ձեռքէն փախչելով եկեր հասեր է ի Վարազ, և իւր վիզը կրած սոյն խաչը թողեր է անդ մի քանի կուսանաց քով, ուր կը մնար, մինչեւ որ չորս դար ետքը յայտնուեցաւ հրաշքով :

10. Գիւտ Խաչի տօնն ի՞նչ է .

Քրիստոսի Ս. Խաչը Յուդայ անունն Հրէի մը ձեռքով 327 թուականին Երուսաղիմայ. մէջ գրտնուած լինելով, այդ յայտնութեան մասնաւոր յիշատակութիւնը կը կոչուի Գիւտ Խաչի տօն :

11. Այդ գիւտն ի՞նչպէս տեղի ունեցած է .

— Հռովմայեցւոց մեծն Կոստանդիանոս կայսեր Հեղինէ անուն թագուհին՝ փափաքելով գրտնել Քրիստոսի Ս. Խաչը, յիշեալ Յուդայի առաջնորդութեամբ փորել տուած է Գողգոթա ըսուած տեղը. ուսկից իրօք երեք խաչեր գտնուելով, սնոնցմէ միոյն Քրիստոսի Խաչն ըլլալն յայտնուած հրաշքով :

12. Ի՞նչպէս տեղի ունեցած է այդ հրաշքը.
— Երբ նոյն իսկ Քրիստոսի աստուածընկալ խաչը՝ թաղելու տարւող մեռեալ պատանւոյ մը վրայ դրուած է, իսկոյն պատանին կենդանացած է աստուածահրաշ գօրութեամբ :

13. Ասոնցմէ զատ ուրիշ տօներ ալ կա՞ն .


— Կան նաեւ Աստուածածնայ յատուկ մի քանի տօներ, որոնք որոշ օրեր ունին . ինչպէս են .

1. Տօն յղայման Ս. Աստուածածնի ի յԱննայէ. Դեկտ. 9ին .

2. Տօն ժննդեան Ս. Աստուածածնի ի յԱննայէ Սեպտ. 8ին .

3. Տօն Ընծայման Ս. Աստուածածնի ի տաճարն Նոյ. 21ին .

4. Տօն Աւետեաց Ս. Աստուածածնի. Ապրիլ 7ին :





ԻՐԱՔԱՆՁԻՐ ԱՆՁԱՆՅ Ի ՔՐԻՍՏՈՍ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՅ

ԱՐԱՐԵԱԼ ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԻՍԻ ԵՆՈՐՀԱԼԻՈՅ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ



Հաւատքով քեզ կ'երկրպագեմ, կը դաւանիմ,
Ո՛վ Հայր, Որդի և սուրբ Հոգի տէր Աստուած իմ,
Դու ես անեղ բնութիւն, անմահ և արարիչ .
Որ ստեղծեցիր մարդ և հրեշտակ և ամէն ինչ .
Ողորմէ՛, Տէր, քու այդ բոլոր ստեղծուածներուն ,
Ինչպէս և ինձ բազմամեղիս՝ սիրովդ անհուն :

Կ'երկրպագեմ քեզ հաւատքով ճշմարտութեան,
Լո՛յս անբաժան, Երրորդութիւն միասնական .
Դու կ'ստեղծես լոյսն, և խաւար կը հալածես,
Արդ հալածէ՛ մեղքի խաւարն իմ հոգիէս .
Լուսաւորէ՛ միտքս այս ժամուս, որ սիրով քեզ
Աղօթք, մաղթանք մատուցանեմ, և լիապէս
Ընդունիմ ես փոխարէնը խնդրուածքիս .
Ձի միշտ խեղճին աղերսներուն դուն կը հաճիս :

Հա՛յր երկնաւոր, Աստուած գրթած և ճշմարիտ,
Ի խնդիր քու մոլորեալ հէք ոչխարիդ
աքեցիր քու սիրելի Որդիդ յաշխարհ,
Դղայ յերկինս և քու առջիդ . գրթա՛ ինձ, Հա՛յր,

Իբր անառակ որդին՝ խնդրեմ՝ ընդունէ զիս
Եւ աէր ըրէ իմ առաջին պատմութեանիս ,
Ձոր մերկացայ անմըտաբար իմ մեղքերով
Եւ խորամանկ չար սատանին հետեւելով :

Ո՛վ Աստուծոյ Որդի և բանդ Աստուած հրգօր,
Որ գըթութեամբ խոնարհեցար ծոցէն քու Հօր,
Մեր փրկութեան համար մարմին առիր կուսէն ,
Խաչ հանուեցար, ու թաղուեցար, երեք օրէն
Յարեար փառքով և համբարձար յերկինս առ Հայր,
Մեղայ յերկինս և քու առջիդ, և չունիմ ճար .
Յիչէ՛ զիս, Տէր, իբր աւազակն աջակողմեան ,
Երբոր դու գաս արքայութեամբ երանական :

Հողիդ սուրբ՝ Տէր, Աստուած անեղ, բղխումն
անճառ ,
Որ Յորդանան և Վերնատուն յանկարծ իջար .
Ի՛ աւազանին կենսատու սուրբ մրկրրտութեամբ
Ձիս լուսաւոր ըրիր շնորհքով և սրբութեամբ ,
Մեղայ յերկինս և քու առջիդ . խնդրեմ Տէ՛ր իմ ,
Ձիս վերստին մաքրէ հրրովդ աստուածային ,
Ինչպէս հրեղէն լեզուօք քո սուրբ առաքեալներ
Մաքրեցիր դու վերնատան մէջ սրբանըւէր :

Անե՛ղ բնութիւն , ես մեղայ քեզ մտքովս խաւս
Ինչպէս հողւովս, նաեւ մարմնովս հէք և տրկար
Մի՛ յիշե՛ր Տէ՛ր, իմ առաջին մեղքերս դժխեմ
Քու սուրբ անուանդ համար՝ զոր ես միշտ կը պաշտեմ :

Ո՛վ ամէն բան դիտող Աստուած ամենատես,
Բանիւ, գործով և խորհրդով ես մեղայ քեզ .
Խնդրեմ՛, ջնջէ՛ յանցանքներուս ձեռագրին էջ ,
Եւ իմ անունս գրրէ՛ կենաց դպրութեան մէջ :

Քրննող գաղտնեաց , ո՛հ , ակամայ և կամակար
Մեղանչեցի գիտակցութեամբ ւ՛անգիտարար .
Ներում չնորհէ՛ մեղաւորիս աղօթաւոր ,
Վասն զի սուրբ Աւազանէն մինչեւ ցայսօր
Մեղանչեր եմ Աստուածութեանդ առջեւ անձամբ
Բոլոր մարմնոյս անդամներով և զգայութեամբ :

Ամենախնամ Տէր , քու երկիւղդ դիր պահապան
Իմ աչքերուս , որ չը դիտեն գէշն ու խոտան .
Ականչներուս , որ չար խօսքեր չը լրսեն բնաւ ,
Եւ բերանիս , որ չը խօսի սուտն իբր իրաւ .
Նոյնպէս սրտիս , որ չը խորհի չարն ապօրէն ,
Եւ ձեռքերուս , որ անիրաւ գործեր չ՛ընեն .
Եւ ոտքերուս որ անօրէն ճամբայ չ՛երթան ,
Հապա ուզդէ՛ ասոնց շարժում որ ընթանան
Այն կենսունակ պատուէրներու քու համեմատ ,
Զոր մեր օգտին համար կուտաս միշտ անընդհատ :

Հուր կենդանի Քրիստոս , վառէ՛ դու անձիս մէջ
Քու կենսաձիր և սուրբ սիրոյդ կրրակն անչէջ .
Որ իմ հոգւոյս ախտերն այրէ իբրեւ խրոխ
Եւ խղճմտանքս ալ զերթ ոսկի մաքրէ լրբիւ .

Նաեւ սրբէ մարմնոյ մեղքեր, և գիտութեան
Լոյսդ արծարծէ իմ սրտիս մէջ միշտ յաւիտեանս :

Իմաստութիւն Հօր Տէր Յիսուս խնդրեմ տուր ինձ
Քու շնորհներդ իմաստութեան անգին, անբիծ .
Որ բարիքներ խորհիմ, գործեմ ամէն ատեն,
Չար խորհուրդներ, վատ խօսք և գործք ես միշտ ատեմ :

Ըվ կամեցող բարեաց Տէ՛ր իմ և կամարար,
Մի՛ թողուր որ երթամ կամքիս վատ ճանապարհ .
Այլ առաջնորդ եղի՛ր ինձ որ քու բարեսէր
Կամքիդ ըլլամ միշտ հետեւող անձնանրէր :

Արքայ հրգօր և երկնաւոր, տուր ինձ անանց
Արքայութիւնդ՝ զոր խոստացար քու սիրելեաց .
Եւ զօրացո՛ւր սիրտս որ ատէ մեղքերն յոռի,
Սիրէ՛ միայն Քեզ, կատարէ կամքդ բարի :

Նախախնամող արարածոց Տէր բարերար,
Քու նշանաւ խաչիդ պահէ միշտ անվրթար
Հոգիս, մարմինս պատրանքներէ մեղաց անբաւ .
Եւ չար դիւաց փորձանքներէն ամենադաւ .
Թո՛ղ անիրաւ մարդիկ չ՝ազդեն անձիս վրնաս
Եւ ո՛չ հոգւոյ մարմնոյ վրտանգք արագահաս :

Քրիստո՛ս փրկիչ, որ պահապանն ես ամենուն .
Դիր հովանի անձիս վրբայ սուրբ աջրդ դուն,
Տիւ և գիշեր թէ՛ տունն ըլլամ և թէ՛ ճամբան,

Թէ՛ մահճիս մէջ ննջեմ և թէ՛ նոր արթըննամ .
Որպէս զի բնաւ չը սասանիմ արկածներէ ,
Ծառայեմ քեզ խոնարհաբար բոլոր սրտէ :

Աստուած իմ , որ կը բանաս ձեռքդ առատաբար
Արարածներդ ողորմութեամբ ընուս իսպառ ,
Քեզ կը յանձնեմ անձս , յաւիտեան դու հոգա՛ Տէ՛ր ,
Եւ պատրաստէ՛ հոգւոյս մարմնոյս ամէն պէտքեր :

Ո՛վ դարձուցիչ մոլորելոց , դու զիս դարձո՛ւր
Չար բնութենէս բարի բնութեան սուրբ և մաքուր .
Տրպաւորէ՛ հոգւոյս մէջ օրն անհեղ մահուան ,
Դրժուիքին վախն ու միակ սէրն արքայութեան .
Որպէս զի զերծ ըլլամ մեղքէ գարչ սւ զազիր ,
Արդարութիւն գործեմ հաճոյ քեզ և ընտիր :
:

Դու որ ազբիւր անմահութեան ես , ո՛վ Քրիստոս ,
Բըղխէ սրտէս զղման արցունք աղբերահոս ,
Որպէս զի դեռ այս աշխարհէս չը բաժնըւած
Լուամ , ջնջեմ տրկար անձէս ազտն իմ մեղաց :

Ո՛վ պարգեւիչ ողորմութեան թոյլ տուր արդ ինձ ,
Որ ուղղափառ սուրբ հաւատքով գործով ամբիժ
Եւ պաստուական մարմնոյդ արեանդ հաղորդութեամբ
Յաջողիմ գալ միանալու քեզ իրաւամբ :

Բարերա՛ր Տէր , յանձնէ բարի հրեշտակի զիս ,
Դր ես յօժար տամ աւանդեմ անոր հոգիս .

Եւ անխրոով անցնիմ պիղծ չար դիւաց մէջէն,
Որք երկնից տակ մարդ որսալու հետամուտ են :

Լոյս ճշմարիտ Քրիստոս , հողիս ըրէ արժան
Փառքիդ լոյսը տեսնելու անդ յաւուր կոչման ,
Եւ արդարոց օթեւանին մէջ հանգչելու ,
Մինչեւ հաճիս փառքովդ կրկին գալ այցելու :

Ո՛վ դատաւոր արդարադատ, երբ Հօրդ փառքով
Քաս դատելու ողջն ու մեռածն համաժողով ,
Մի՛, մի դատիր քու այս ծառադ հէք ապիկար ,
Այլ փրկէ՛ զիս յաւիտենից կրակէն խապառ .
Լսել տո՛ւր ինձ կոչն արդարոց երանաւէտ
Վայելելու արքայութիւնն միշտ և յաւէտ :

Ամենողորմ Տէր , ողորմէ՛ այն ամէնուն ,
Որ քու վրայ ունին հաւատք ջերմ եռանդուն ,
Իմիններուս , օտարներուն , ծանօթներուն ,
Անծանօթից և կենդանեաց , մեռելներուն ,
Եւ մինչեւ իսկ իմ թշնամեաց և ատելեաց
Շնորհէ՛ ներում և թողութիւն ամէն մեղաց .
Եւ ինձ համար թէ կը խորհին չարիք , վրնաս ,
Շրջէ՛ անոնց չար մտքերը դու հանապազ ,
Որ արժանի ըլլան քու մեծ և անսահման
Ողորմութեան , որ չունի չափ և ո՛չ վախճան :


Փառաւորեա՛լ Տէր , ընդունէ՛ քու ծառային


Աղաչանքներն և կատարէ զայնս ի բարին ,
Միջնորդութեամբ Տիրամայր սուրբ Աստուածածնին ,
Եւ Յովհաննու յառաջընթաց Կարապետին .
Ստեփաննոսի նախավրկայ մարտիրոսին
Եւ մեր սուրբ Հօր Գրիգորի Լուսաւորչին
Եւ սրբազան Առաքելոց , Մարգարէից ,
Հայրապետաց , Մարտիրոսաց , սուրբ վրկայից ,
Ճգնաւորաց և Կուսանաց և Միանձանց ,
Եւ երկնաւոր և երկրաւոր ամէն սուրբ Հարց .
Եւ քեզ սրբոյ Երրորդութեանդ միասնական
Կ'երկրպագենք տալով պատիւ փառք յաւիտեան :

ՓՈՒՆՅ ՅԱՇԵԱՐՉԻԿ ԲԱՐԲԱՌ ԸՍՏ ԲՆԱԳՐԻՆ

ՍԱՀԱԿ Ա. ԽԱՆՃԵԱՆ

➤ Վ Ե Ր Ձ ➤





ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Վ. ԵՆ Կ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԻԱՆ
Սուրբան-Համամ
Կ. ՊՈԼԻՍ

